




Երեսնամյա այսպիսին

**ՄԱՅՐ ԱԹՈՒ ՍՈՒՐԲ ԷԶՄԻԱՇՆԻ
ԿՐՈՆԱԿԱՆ, ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ,
ԼՐԱՏՎԱԿԱՆ ԵՐԿՇԱՐԱԹԱԹԵՐԹ**

Ս. Աստվածածնի վերափոխման տոնը Մայր Աթոռ Սբ Էջմիածնում

Օգոստոսի 17-ին Հայաստանյայց Առաքելական Սբ Եկեղեցին մեծ հանդիսավորությամբ նշեց Տիրամոր՝ Ս. Մարիամ Աստվածածնի վերափոխման բերկրառատ տոնը:

Միաձնաէջ Մայր տաճարում, մասնակցությամբ Մայր Աթոռի միաբանների եւ ներկայությամբ ուխտավոր հավատացյալների, մատուցվեց սուրբ



եւ անմահ Պատարագ: Պատարագիչն էր Մայր Աթոռի լուսարարապետ Հովնան եպս Հակոբյանը: Պատարագի սրբազան արարողության ընթացքում Հովնան սրբազան իր քարոզում անդրադարձավ Ս. Աստվածածնի վերափոխման տոնի խորհրդին: Սրբազան հայրը նաեւ իր խորհրդածությունները ներկայացրեց շնորհընկալ եւ պսակավոր ս. Տիրամոր ամբողջանվեր ծառայության եւ լուսեղեն կերպարի առնչությամբ՝ այն համարելով մայրության վեհ գաղափարի կատարելատիպ:



«Աստվածամայրը յուզաբեր կանանց հետ միասին առաջիններից մեկը եղավ, որ ավետեց մեր Տեր եւ Փրկիչ Հիսուս Քրիստոսի իրաշափառ հարությունը եւ մնաց Երուսաղեմում՝ տեսնելու իր Որդու խոստումը՝ Ս. Հոգու գալուստը:

Աստվածամայրը մեզ համար ամեն բանից առաջ մոր կերպար է. մայր՝ նման բոլոր մայրերին», - նշեց սրբազան հայրը:

Պատարագիչ Հովնան սրբազանը, շնորհավորելով ներկաներին տոնի առիթով եւ հայցելով ս. Աստվածածնի բարեխոսությունը հայրենիքի եւ աշխարհասփյուռ հայ ժողովրդի համար, մաղթեց, որ Աստվածամոր շնորհները՝ իբրեւ ցող, երկնքից իջնեն բոլոր կանանց եւ մայրերի վրա:

Հավարտ Պատարագի, հանդիսապետությամբ Նաթան արք. Հովհաննիսյանի, կատարվեց հաղորդօրհնեցի հանդիսավոր կարգը, որի ընթացքում՝ հոգեգմայլ շարականի երգեցողությունից հետո, ընթերցվեց օրվա խորհուրդն ամփոփող ավետարանական հատվածը, ապա՝ ս. Ներսես Շնորհալու «հաղորդի օրհնության» թուղթը: Արարողությունից հետո խաղողի օրհնված ողկույզները բաժանվեցին հավատացյալ ուխտավոր ժողովրդին:

Մայր Աթոռ Ս. Էջմիածնում կատարվեց կրթության մշակների օրհնության կարգ

Օգոստոսի 31-ին՝ Ս. Աստվածածնի գոտու գյուտի տոնին, Միաձնաէջ մայր տաճարում մատուցվեց սուրբ եւ անմահ Պատարագ, որի ավարտին, հանդիսապետությամբ Ն. Ս. Օ. Տ. Տ. Գարեգին Բ Ծայրագույն Պատրիարք եւ Ամենայն Հայոց Կաթողիկոսի, 2014-2015 թթ. ուսումնական տարեշրջանի նախօրեին տեղի ունեցավ կրթության մշակների օրհնության կարգ:

Արարողությանը ներկա էին ՀՀ կրթության եւ գիտության նախարար Արմեն Աշոտյանը, բարձրագույն ուսումնական հաստատությունների ղեկավարներ, հանրակրթական դպրոցների տնօրեններ:

Օրհնության կարգի ավարտին Ամենայն Հայոց Կաթողիկոսն իր գնահատանքը հայտնեց կրթության գործի պատվարժան պատասխանատուներին ու մշակներին եւ մասնավորապես ասաց. «Մեծ խորհուրդ ունի գեղեցիկ այս ավանդույթը, որ նոր ուսումնական տարին մեր երկրի կրթության ոլորտի պատասխանատուներն սկսում են Մայր Աթոռ Սբ



սիրով, հաստատելու ճշմարիտ ուղիներում, զորացնելու եւ պահպանելու հոգեւոր ու ազգային մեր ինքնությունը: Հոգեխնամ այս առաքելությունը բարեբերությամբ շարունակելու հայցով առ Աստված՝ մենք գոհունակ սրտով իայրապետական մեր օրհնությունն ու բարեմաղթանքն ենք բերում Ձեզ եւ շնորհավորում 2014-2015 ուսումնական տարեշրջանի մեկնարկի առիթով:

Այս օրերին հայրենի կրթական մեր բոլոր հաստատու-

նկատմամբ սերն ու ճանաչողությունը...

Սիրելիներ, գաղտնիք չէ, որ Հայաստանի անկախությանը հաջորդած դժվարություններն ու մարտահրավերներն իրենց հետքն են թողել նաեւ կրթության ասպարեզում: Ամբողջ մի սերունդ հասակ առավ, երբ մեր երկիրը գտնվում էր պատերազմական իրավիճակում, տնտեսական ու սոցիալական ծանր փորձությունների մեջ: Այսօր ուրախալի է տեսնել, որ ինչպես մեր ժողովուրդը, այնպես եւ հայրենի կառավարությունն ամենայն հոգածությամբ ջանքեր են բերում, որպեսզի մեր նոր սերունդն առավել կրթված լինի՝ հաղորդ համամարդկային ձեռքբերումներին»:

Վեհափառ Հայրապետը նաեւ հայցեց, որ Երկնավորն Իր շնորհներով զորացնի կրթության մշակներին, եւ Տիրոջ օրհնությամբ ուսման սերն անբաժան լինի հայրորդիների սրտեքից: Նորին Սրբությունը մաղթեց, որ ուսումնական տարում առատորեն արդյունավորվեն կրթության գործի նվիրյալների ջանքերը՝ հանուն նոր սերնդի որակյալ կրթության, հայրենյաց ավանդներով ու քրիստոնեական արժեքներով դաստիարակության եւ հայրենիքի ու ի սփյուռս աշխարհի հայ ժողովրդի խաղաղ ու երջանիկ ապագայի:



Էջմիածնում միասնական աղոթքով: Մայր Աթոռ Սբ Էջմիածնից է սկիզբ առել հայ գրի ուղին՝ հավատքով ու գիտությամբ լուսավորելու մեր ժողովրդի հոգին, հանճարացնելու գիտության եւ իմացության

թյունները դարձյալ հրավեր են ուղղում մեր սիրասուն զավակներին՝ քայլելու գիտելիքի եւ իմաստության ամբարման ճանապարհով, զորացնելու ազգային ու հոգեւոր նկարագիրը եւ դպրության ու մշակույթի

Ն. Ս. Օ. Տ. Տ. ԳԱՐԵԳԻՆ Բ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՒ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ՇՆՈՐՀԱՎՈՐԱԿԱՆ ՈՒՂԵՐՉԸ ԳԻՏԵԼԻՔԻ ՕՐԿԱ ԱՌԻԹՈՎ (1 սեպտեմբերի 2014 թ.)

Մայր Աթոռ Սբ Էջմիածնից հայրապետական Մեր օրհնությունն ենք հղում եւ շնորհավորում կրթության գործի նվիրյալներին, բոլոր մանկավարժներին, ուսանողներին եւ աշակերտներին՝ Գիտելիքի օրվա առիթով:

Այսօր կրթական մեր բոլոր հաստատությունները դարձյալ իրենց լուսավոր հարկի ներքո են ընդունել մեր սիրատուն գավակներին՝ հրավիրելով քայլելու գիտելիքի ամբարման, հոգեւոր արժեքների ճանաչման եւ իմաստության ճանապարհներով: Մեր ժողովուրդը միշտ կարելու է գիտելիքը եւ ուսումը, որոնք առանցքային նշանակություն են ունեցել մեր կյանքում: Այսօր եւս մեր երկրի հզորացման, հայրենյաց կյանքի բարօրության, մեր պետության սահմանների ամրության եւ մեր ժողովրդի պայծառ գալիքի համար անգնահատելի է ազգի ուսյալ զավակի եւ քաղա-

քացու դերը, քանզի սուրբգրային խոսքի համաձայն՝ տունը շինվում է իմաստությանը եւ հաստատվում հանճարով, եւ գիտությանը եւ շտեմարանները լցվում ամենայն պատվական հարստությամբ եւ բարիքով (Առակներ 24:3-4):

Սիրելիներ, Մեր հայցն է առ Աստված, որ ուսման սերը անբաժան լինի մեր գավակների սրտերից, եւ ուսումնական նոր տարում առատորեն արդյունավորվեն մեր մանկավարժների նվիրյալ ջանքերը՝ հանուն մեր նոր սերնդի որակյալ կրթության, հայրենյաց ավանդներով ու քրիստոնեական մեր արժեքներով դաստիարակության եւ մեր Հայրենիքի եւ ի սփյուռս աշխարհի մեր ժողովրդի խաղաղ ու երջանիկ ապագայի:

Մեր Տեր Հիսուս Քրիստոսի շնորհը, սերը եւ ողորմությունը թող լինեն ձեզ բոլորիդ հետ: Ամեն:

Ամենայն Հայոց Կաթողիկոսը ցավակցագիր է հղել Հռոմի Ֆրանցիսկոս Պապին

Օգոստոսի 21-ին Ն. Ս. Օ. Տ. Տ. Գարեգին Բ Ծայրագույն Պատրիարք եւ Ամենայն Հայոց Կաթողիկոսը ցավակցագիր է հղել Հռոմի Սրբազան Բախանայապետ Ֆրանցիսկոս Պապին՝ ավտովթարի հետեւանցով նրա հարազատների ողբերգական մահվան կապակցությամբ:

«Մեր խորին վշտակցությունն ենք հայտնում ու ցավակցում Ձեզ եւ Ձեր հարազատներին: Աղոթում ենք, որ Տերն Իր սիրո եւ ողորմության մեջ ընդունի նրանց հոգիները... եւ մխիթարություն պարգևի Ձեզ, Ձեր ընտանիքի անդամներին ու հարազատներին:

Թող Բարձրյալն Աստված օգնական լինի Ձեզ եւ դժվարին այս պահին զորացնի՝ հաղթահարելու մեծ կորստյան ցավը եւ շարունակելու Ձեր աստվածահաճո հովվապետական առաքելությունը», - ասված է Վեհափառ Հայրապետի ցավակցական ուղերձում:

Ամենայն Հայոց Կաթողիկոսը դատապարտել է Իրաքի եզդիների հանդեպ շարունակվող բռնությունները



Ն. Ս. Օ. Տ. Տ. Գարեգին Բ Ծայրագույն Պատրիարք եւ Ամենայն Հայոց Կաթողիկոսը զորակցության գիր է հղել համայն եզդիների հոգեւոր առաջնորդ Նորին Սուրբ Մեծություն Սիրե-Միրա Թահսիմ Բեգին, որը վերջինիս փոխանցվել է Իրաքի հայոց թեմի առաջնորդ Ավագ արք. Ասատուրյանի միջոցով: «Համայն հայության հոգեւոր կենտրոն Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնից Մեր ցավակցություններն ենք հղում Ձեզ՝ այս օրերին Իրաքում եզդի ազգաբնակչության նկատմամբ տեղի ունեցող զանգվածային կոտորածների կապակցությամբ: Մենք խորապես անհանգստացած ենք Իրաքի հյուսիսային շրջաններում իրականացվող անմարդկային բռնությունների եւ դրանց հետեւանքով բազմաթիվ զոհերի առնչությամբ», - ասված է Վեհափառ Հայրապետի գրության մեջ:

Խստորեն դատապարտելով եզդի ժողովրդի դեմ իրագործվող ջարդերն ու բռնությունները՝ Ամենայն Հայոց Կաթողիկոսը վստահություն է հայտնել, որ բազմադարյա պատմություն ունեցող եզդի ժողովուրդը կտոկա եւ կհաղթահարի իր առջեւ ծառացած այս փորձությունը: Նորին Սրբությունը նաեւ կոչ է արել միջազգային հանրությանն ու կազմակերպություններին՝ անհապաղ քայլեր ձեռնարկել դադարեցնելու համար եզդիների ջարդերն Իրաքում:

Ամենայն Հայոց Կաթողիկոսը մաղթել է, որ վերահաստատվի խաղաղությունն Իրաքում, եւ Իրաքի աստվածասեր ժողովուրդը շարունակի իր խաղաղ կյանքը հայրենի օջախներում:

Լրատվական կյուբերը՝
ՄԱՅՐ ԱԹՐՈՒ ՍՈՒՐԲ ԷՋՄԻԱԾՆԻ
ՏԵՐԵԿԱՏԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ

Մեր հասարակության մի ստվար հատված այն տեսակետն ունի, թե, իբր, երբ աղանդավորների եւ խորթ կրոնական այլ կազմակերպությունների ներկայացուցիչներին հալածում, տուգանում կամ դատում են, դրանով նրանք իրենց հավատացյալների շրջանում «սրբանում են», արժանանում հարգանքի ու պատվի: Ուստի նրանց նկատմամբ պետք է զգուշավոր լինել, ուշադրություն չդարձնել նրանց կամ արհամարհել:

Նման տեսակետը ոչ միայն անընդունելի է, այլեւ՝ իրավական եւ բարոյա-հոգեբանական տեսանկյունից վտանգավոր: Ինչո՞ւ: Հենց այն պարզ պատճառով, որ աղանդավորները եւ խորթ կրոնական այլ կազմակերպությունների ներկայացուցիչները, խախտելով Հայաստանում ու նաեւ Արցախում գործող օրենքները, ոտնահարում են բնակչության բացարձակ մեծամասնության իրավունքները եւ մնում անպատիժ: Բայց չէ՞ որ օրենքի առաջ բոլորն էլ հավասար են. ի՞նչ կապ ունի՞ օրենքն աղանդավորն է եւ խախտում, թե՞ այլ քաղաքացի: Մեծն Ջիվանու խոսքերով ասած՝ «Խեղճ մարդը, սխալմամբ մի հավ գողնալով, բանտի մեջ է փոխել, խելքի՝ աշեցեք», իսկ նրանց նկատմամբ, ովքեր գիտակցաբար հարյուրավորների են մոլորեցնում՝ զբաղվում հոգեորոշությամբ (դավանաորություն), կրոնական անօրեն քարոզչությամբ, մարդկանց դեմ կիրառում հոգեբանական արգելված միջոցներ, պետք է զգուշավոր լինենք:

Հարցը դիտարկենք նաեւ հոգեւոր տեսանկյունից:

Խղճի ազատությունից օգտվելն ու ցանկացած կրոն ազատ դավանելը մարդու եւ քաղաքացու իրավունքն է: Հարց է ծագում. «Որտեղից՞ է խղճի ազատության գաղափարը, եւ ընդհանրապես ո՞վ է մարդուն տվել ազատ կամք»: Եթե մարդը գտնում է, որ

ԶԳՈՒՇԱՎՈՐՈՒԹՅԱՆ ՎՆԱՍՆԵՐԸ

ազատություններն իրեն տրվել են «Մարդու իրավունքների համընդհանուր հռչակագրի», միջազգային մարդասիրական իրավունքի վերաբերյալ այլ հռչակագրերի, օրենքների, փաստաթղթերի եւ հայոց երկու պետությունների Սահմանադրությունների միջոցով, ապա պետք է ծանոթ լինի նաեւ Նույն փաստաթղթերով իրեն «վերապահված» պարտականություններին եւ սահմանափակումներին: Իսկ դրանք Նույն քան պարզ ու հստակ են գրված, որքան՝ հիշատակում ենք նրանց ազատությունների մասին: Պարզապես պետք է ենթարկվել այն երկրի օրենքներին, որտեղ ապրում ես կամ հյուր ես գնացել: Քրիստոնյաներին հայտնի է (ի դեպ՝ Արցախում գործող բոլոր աղանդավորները, այդ թվում՝ «Եհովայի վկաները», իրենց քրիստոնյա են համարում) Պողոս առաքյալի թուղթը հռոմեացիներին (ԺԳ 1-7): Այնտեղ հստակ գրված է. «Ամեն մարդ, որ իշխանության տակ է, թող հպատակվի նրան, որովհետեւ առանց Աստծու թույլտվության իշխանություն չի կարող լինել, եւ գոյություն ունեցող իշխանություններն Աստուծոց են կարգված: Ով հակառակվում է իշխանությանը, Աստծու հրամանին է հակառակվում, եւ նրանք, որ հակառակվում են, իրենց դատաւանան են ընդունում. քանի որ իշխանավորները վախ չեն ազդում բարի գործերի համար, այլ՝ չար գործերի: Ուզո՞ւմ ես չվախենալ իշխանությունից՝ բարին գործիք եւ նրանից գովասանք կստանաս, որովհետեւ նա Աստծու պաշտոնյա է քեզ՝ բարի գործերի համար. իսկ եթե չար գործես, վախեցի՞ր, քանի որ սուրը մեջքին ի-



զուր չէ կապված. Աստծու սպասվոր է նա, վրեժխնդիր՝ բարկության համար, նրա դեմ, ով չար է գործում. դրա համար պետք է հնազանդվել ոչ միայն բարկության համար, այլ նաեւ խղճմտանքի պատճառով. ահա թե ինչու հարկեր եք վճարում, որովհետեւ նրանք Աստծու սպասվորներ են՝ այդ բանին կանխապես նշանակված: Արդ, հատուցե՛ք յուրաքանչյուրին իրենց պարտքերը. որին հարկ՝ հարկը, որին մաքս՝ մաքսը, որին երկյուղ՝ երկյուղը, որին պատիվ՝ պատիվը»: Կարծում եմ՝ ցանկացած քրիստոնյա մարդ, կարդալով Պողոս առաքյալի վերոգրյալ տողերը, կհասկանա, որ իրավունք չունի խախտելու երկրում գործող օրենքները, իսկ իշխանավորները, ովքեր հարկատուների հաշվին աշխատավարձ են ստանում, պարտավոր են կատարել իրենց պարտականությունները՝ օրենքով սահմանված կարգով պատժել օրինազանցներին:

Հետաքրքիրն այն է, որ մեր պարագայում բոլոր օրինախախտներն իրենց քրիստոնյաներ են համարում, իսկ իշխանավորների բացարձակ մեծամաս-

նությունը եւս քրիստոնյա է: Հետեւաբար՝ օրինազանց հավատացյալների նկատմամբ պետք է ոչ թե զգուշավորություն կամ այլ մոտեցում ցուցաբերել՝ դրանով խտրականություն ղնելով հասարակության մյուս անդամների միջեւ, այլ կիրառել օրենքը՝ իր տառին ու բառին համապատասխան:

Հիմա զգուշավորությամբ մի հարց բարձրացնենք՝ ինչո՞ւ Արցախի Հանրապետությունում գործող կրոնական միավորումների աղանդավորական խմբերից եւ ոչ մեկը պետական գրանցում չի ստացել, մի՞թե դա աշխարհիկ կամ հոգեւոր այս կամ այն պաշտոնյայի քմահաճույքից է բխել:

Հարցին մոտենանք տեսականորեն: Կրոնական միավորումների գրանցման հարցում հնարավոր է երեք մոտեցում. առաջին՝ պետականորեն գրանցել միայն Հայ Առաքելական Եկեղեցին, երկրորդ՝ չգրանցել եւ ոչ մի Եկեղեցի (վրացական տարբերակ), եւ երրորդ՝ գրանցել կրոնական այն միավորումները, որոնք առաջնորդվում են երկրի գործող օրենքներով եւ կատարում են դրանց պահանջները:

Արցախի Հանրապետության շահագրգիռ ատյաններում երկարատեւ քննարկումներից հետո ընդունվել է երրորդ տարբերակը: Այն համահունչ է ԼՂՀ Սահմանադրությանը եւ միջազգային իրավունքի հանրաճանաչ սկզբունքներին:

Արցախում պետական գրանցում են ստացել Հայ Առաքելական Եկեղեցու Արցախի թեմը, Արցախի Հայ Կաթողիկե Եկեղեցին, Արցախի Հայ Ավետարանական Եկեղեցին, Արցախի Ռուս Ուղղափառ Եկեղեցին եւ Հայ Առաքելական Եկեղեցու Արցախի

թեմի Եկեղեցասիրաց եղբայրակցություն կրոնական կազմակերպությունը: Կրոնական մյուս միավորումները՝ «Եհովայի վկաները», «Արթնության կրակը», «Յոթերորդ օրվա աղվեստիստները», «Ավետարանական բապտիստները», «Ռեման», ինչպես նաեւ որոշ «տնային Եկեղեցիներ» չեն ստացել պետական գրանցում:

Պատճառը շատ պարզ է. որովհետեւ նրանց գործունեությունը վտանգում է պետական եւ հասարակական անվտանգությունը, կարգուկանոնը, քաղաքացիների առողջությունն ու բարոյականությունը, հասարակության մյուս անդամների իրավունքներն ու ազատությունները:

«Եհովայի վկաները» պետական գրանցման մերժումը բողոքարկել են ԼՂՀ Գերագույն դատարանում, վերջում էլ՝ Մարդու իրավունքների եվրոպական դատարանում (2010 թ. սեպտեմբերի 17): Տարբեր ատյանների դատարաններում ապացուցվել են նրանց գործունեության վերաբերյալ վերը նշված մեղադրանքները: Նրանց չեն օգնել անգամ աշխարհի տարբեր վայրերից հրավիրված եւ միջազգային ճանաչում ունեցող իրավապաշտպաններն ու փաստաբանները: Սակայն առ այսօր էլ «Եհովայի վկաները» շարունակում են իրենց «ավերածությունները» եւ հիմնականում մնում անպատիժ:

«Արթնության կրակը» կրոնական միավորումը պետական գրանցման մերժումը չի բողոքարկել, երեւի «Եհովայի վկաների» դառն փորձն աչքի առաջ է ունեցել, բայց նախկինի պես շարունակում է հավաքներ կազմակերպել ու մնալ անպատիժ: Կիրակնօրյա եւ այլ հիմնական հավաքներն «Արթնության կրակը» կազմակերպում է Ստեփանակերտի 3-րդ դպրոցի անմիջական հարեւանությամբ՝ Ազատամարտիկների 14 շենքի երկրորդ հարկում տեղակայված Լեւոն Սարգսյանին պատկանող ԱՁ տարածքում:

Շարունակությունը՝ էջ 3



Չախից առաջինը՝ Վահրամ Վազան

Սկզբը՝ թիվ 13-15

Փորձության եկաթնաշերտը նաեւ ազգային գիրը։ Ուղղագրական «բարեփոխությունից» հետո որոշեցին փոխել նաեւ ազգային գրատեսակը՝ մաշտոցյան տառերը լատինականացնել։ Այս գործի պարագլուխը Պողոս Մակինցյանն էր՝ «Արդյոք չի՞ կարելի հայերենի ուղղագրությունը լիակատար դարձնելուց հետո գործադրել թյուրքերի քնդունած նոր լատինական այբուբենը» («Լատինական գրի մասին», «Չարյա Վոստոկա», 1924, թիվ 740, արտատպությունը՝ ՄԶ, 1924, թիվ 279, 5 դեկտեմբեր)։ Այս մասին ավելի հանգամանորեն տես՝ Դ. Գասպարյան, «Դավադրություն մեսրոպյան այբուբենի դեմ», «Փակ դռների գաղտնիքը», Ե., 1994, էջ 469-487)։

Ամեն ինչ արվում էր ազգային արժեքները փլուզելու, ազգային հանդեպ հակակրանք, անվստահություն առաջացնելու համար։ Ըստ այդմ՝ ավելորդ են համարվում ազգային գրողները, ազգային գիրը, ազգը, դրա փոխարեն՝ կեցցե ապազգային ինտերնացիոնալիզմը։

Սուրխաթյանը, հայացք ուղղելով պրոլետարիատին, հարց է տալիս՝ ի՞նչ են երգել նրանք, եւ ինքն էլ պատասխանում է. «Երգել են գերազանցապես գյուղն ու գյուղացուն, ամեն ինչի վրա, նույնիսկ պրոլետարիատի վրա, նայել են գյուղացու աչքերով, խոսել գյուղացու պատկերացումներով («Ծիշտ քննադատելու ... պրոբլեմը», «Պրոլետար», 1927, թիվ 52, 17 դեկտեմբեր)։ Եվ ի՞նչ էին նորերի գրքերի վերնագրերը՝ «Անիվի երգը» (Վահան Գրիգորյան), «Ռազմի նվազներ», «Ժանգ եւ մետաղ» (Խորեն Ռադի), «Մկանների լիրիկա» (Խաչիկ Զրաբյան), «Արտերի լիրիկա» (Աղավնի)...

Նորերի տեսաբաններից Զ. Ագաթյանը «Սոցիալիստական կուլտուրայի շեմին» հոդվածում անցյալը բնութագրում է վարկաբեկիչ արտահայտություններով եւ դեմքով կտրուկ շրջվում դեպի անորոշ նորը. «Տիրացուական հոգեբանությամբ վարակված մեշանական այս միջավայրում անցյալի բացասումն արդեն խոշոր առաջադիմական գործ պետք է համարել» («Մուրճ», 1922, թիվ 1 էջ 30)։ Նա ողջանում է նաեւ «Երեքի» դեկլարացիան՝ այն համարելով «չափազանց նշանավոր երեւույթ»։ «Մենք» բանաստեղծության մեջ Վշտունին Շեքսպիրի նման մի անուժ ստվեր է համարում Բեթովենին եւ ներկա-

յացնում ժամանակակից պոետի կերպարը, ում մուսան «Էլեկտրիկն է, շոգին», եւ ում երգերով «աշխարհը հուզանք ու զանգ» պիտի զգա։ Թռիչք, հեւք, երկաթ, շարժում, վազք, արագություն եւ աշխարհական մի ուժ, որ կյանքում ոչինչ չտեսած պրոլետար բանաստեղծին ներշնչում էր հեղափոխությունը։ Ամեն ինչ ծննդյան ցավերի մեջ էր, ծնվում էր նոր կյանքը։ Ծնվում էր նոր օրերի Վահագնը՝ «Ծնունդը Երեւանում» («Մուրճ» 1923, թիվ 3)։ Այդ աղմկարար ու զվարթ խոսքի պահանջով Ալազանը գրում է.

Երեւանը երեկ արթուն ու ժիր
պատրաստ-
Աշխատանքից հետո աշխատանքի
վայրում
(Թող Չարենցը ասի՝ «քոստո»,
«քնած գրաստ»)
Իրեն խաբող, կապող աստվածներն էր
այրում։

Պատկերների նոր համակարգի մեջ է հայտնվում ոչ միայն Երեւանը, այլեւ՝ Գյումրին, հոգեւոր կենտրոն Էջմիածինը, անգամ՝ Մասիսը։ Ն. Չարյանը նոր կերպարով է ուրվագծում անգամ ազգային ամենաթանկ սրբությունը («Մասիս», «Մուրճ», 1923, թիվ 4)։

Տեսնում եմ.
Կանգնել է հին սարը - Մասիսը.
Բանվոր է նա հիմա վիթխարի,
Ոսկեթել գլխարկ է դրել՝
Ծռել է արեւը գլխին,
Սարերը զոզնոց է արել,
Կապել է փորին։
Մերմազան բանվորի պես արի
Մասիսը կանգնել է վեհ...

Ըստ Զ. Հակոբյանի՝ «այս անցողական շրջանում <...> պրոլետարիատն իր կյանքի էպոսն է ապրում» («Գրական մարտիկներ», «Դարբնոց», 1922, թիվ 2-5, էջ 3), ինչը եւս պիտի արտացոլվի արդի գրականության մեջ։ Այսինքն՝ պետք է ստեղծվի բանվորագրակի էպոսը, պետք է գա երկաթե Մեսիան եւ գրի երկաթի դյուցազներգությունը։ Կար կարմիր Զրիստոսը՝ հեղափոխության առաջնորդը, կար կարմիր ներկած կոլեկտիվը՝ ժողովրդի անուկից խոսող պրոլետարիատը, եւ կար կարմիր թատերաբեմը՝ բռնկած հեղափոխության հրդեհներով։ Սա հեղափոխության երկաթագիրքն էր՝ կարմիր Նարեկը (Արշալույս Արշարունի)։ Ամեն ինչ կար, բայց հայրենիքը չկար։ Այս նոր դյուցազներգությունը ոչ

ՀԱՅՐԵՆԱՊԱՏՈՒՄԸ ՆՈՐ ԻՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԱՌՋԵՎ XX ԴԱՐ

(մասնակի կրճատումներով)

թե հանուն հայրենիքի էր, այլ՝ ընդդեմ... Օրվա հեքիաթը Էլեկտրաֆիկացիան էր, գործարանը՝ պոեմ, հաստոցը՝ բանաստեղծություն, ամբոխը՝ վեպ, շքերթը՝ թատրոն, լեզուն՝ հեղափոխական կոչ, կշռույթը՝ «ինդուստրիալ արդյունաբերության ռիթմ», «Էլմաշտրեստը՝ Էլեկտրահուզանք» (Վշտունի)։

Մոսկովյան «Ջուրա»-ի հեղինակներից մեկը, գրախոսելով Գ. Աբովի «Դանակը բլին» գիրքը, գրում է. «Պոեմի լեզուն կապազ մարդու կցկտուր եւ աղքատ հնչյուններ են» («Ջուրա», 1923, թիվ 1, էջ 16)։

«Համլետյան» արվեստագետն ու գաղափարախոսը բուրժուական էր կամ մանր բուրժուական («Դիրքերում», 1924, թիվ 1)։ Դրան հակառակ՝ «Բանվոր եւ պրոլետարական արվեստագետներ, ուղարկեցե՛ք ձեր ստեղծագործությունները ձեր շաբաթաթերթին, թող նրանք լինեն թույլ եւ չիղկված» (Նույն տեղը)։ Նավթի, «ստանոկի» ու «մագուրի» մեջ կորած բանվորի գրականություն։

Այդ հետագայում միայն պիտի արձանագրվեր. «...մեր բանաստեղծական կադրերի կուլտուրական հետամաճությունը ցնցիչ է» («Գրական դիրքերում», 1930, թիվ 5, էջ 51)։ Նաեւ այս պատճառաբանությամբ է բացատրվում պոեզիայի հանդեպ հանրային հետաքրքրության թուլացումը։ Վերադարձ դեպի դասականները նկատվում է 1920-ականների վերջին, եւ անգամ Յուլյա Խանգադյանն անցանկալի է դա համարում. «Կլասիկներին աշակերտելու <...> տեղեկացրեց կարող է դառնալ աղետ» («Գրական դիրքերում», 1930, թիվ 11-12, էջ 84)։

Այս կույրկուրայնությունը պահպան-

վեց, խորացավ, իսկ 1920-ականների վերջերից ավելացավ քաղաքական երանգը եւ ուղղվեց արտաքին կապիտալիստական աշխարհի դեմ։

Երկաթի պաշտամունքը հասնում է այնտեղ, որ Թոթովենցն ակնհայտ երգիծանքով գրում է «Պողպատի ճաշ» թատերգությունը, որ նույն նշանակությամբ կարող էր լինել երկաթի հյուր կամ այլու-մինե չամիչ։

Վանանդեցին հանդես է գալիս «Հայ ազգայնական շարժման մենշեիկյան պաշտպանների սողոսկումները գրականության մեջ» («Գրական դիրքերում» 1922, թիվ 1) հոդվածով եւ որպես ազգայնական շարժման կողմնակիցների՝ մեղադրում Յուլյա Խանգադյանին (Ավետիս Ահարոնյանի ստեղծագործությանը նվիրված գրքի համար) եւ Թադեոս Ավիալբեգյանին (Արսեն Թոխմախյանին նվիրված գրքի համար)։ Հարվածի տակ են ընկնում Բակունցի «Մթնածորը» (Մ. Մինասյան, նույն տեղը), Մահարու «Բարդիներ» գործերը (Վ. Անդրոբ՝ Ալազան, նույն տեղը)։ Ազգայնականությունն եւ ազգային դիմագիծ ունեցող գրողներին պախարակելու նպատակով «Ազգային խանձարուրի եւ պրոլետարական դրոշակի միջեւ» հոդվածում Վանանդեցին քննադատում է Զ. Սուրխաթյանին. «...մենք թույլ չենք տա, որ գրական վարժապետիզմը [այսինքն՝ Սուրխաթյանը] առաջնորդի մեզ դեպի Չարենց, դեպի ազգային (իր բովանդակությամբ) գրականությունը» («Գրական դիրքերում», 1927, թիվ 5, էջ 74)։

Ահա այդ ոգեւորությամբ լույս տեսան Եղիշե Չարենցի «Պոեզագունա» (1922), «Կոմալմանախ» (1924) ժողովածուները, «Ռոմանս աներ» (1922) պոեմը, Ստեփան Չորյանի «Յեղևմուի նախագահը» (1923), «Գրադարանի աղջիկը» (1925), «Վարդաձորի կոմունը» (1930) վիպակները, Վահան Թոթովենցի «Բաքու» (1930-1934) եռադրյունը, Նաիրի Չարյանի «Հրանուշը» (1925), «Զին աղջիկ» (1926), «Ռուշանի քարափը» (1930), «Դյուցազնագիրք։ Ցարիցիկյան դրվագներ» (1940) պոեմները, «Ջրանցքի կապույտ երկրում» (1926), «Հարվածներ» (1933), «Ամրոց» (1935) ժողովածուները, «Հացավան» (1937, 1947) վեպը, Գեղամ Սարյանի «Շիրակի հարսանիքը» (1925), «Յունկերսի խորտակումը» (1926) պոեմները, «Երկիր խորհրդային» (1930), «Երկաթե ոտնաձայներ» (1933), «Միջօրե» (1935) ժողովածուները, Գուրգեն Մահարու «Երեք ագիտ-օպերետ» (1924) գիրքը եւ «Շիրակի ջրանցքը» (1925) պոեմը, Ազատ Վշտունու «Հուզանք ու զանգ» (1923), «Neo Orientalia» (1923), «Սալամ-նամե» (1924), «Արեւելքի հուր է հիմա» (1927) ժողովածուները, «Խոսում է ռադիո Ալմիրը» (1931) պոեմը, Ալազանի «Հրաբխապոեզիա»։



Վահան Թոթովենց

Շարունակությունը՝ էջ 4

ԶԳՈՒՇԱՎՈՐՈՒԹՅԱՆ ՎՆԱՍՆԵՐԸ

Սկզբը՝ էջ 2

Այդ հավաքներն անօրինական են եւ արգելված, քանի որ կրոնական միավորումը չունի պետական գրանցում։ Հիմա հարց է առաջանում. եթե տվյալ համայնքի քրիստոնյա հավատացյալները գիտակցաբար խախտում են Արցախի Հանրապետության օրենքները, պատժվում են,

իսկ այս աղանդների առաջնորդները հարյուրավոր մարդկանց մոլորեցնում են, կիրառում են հոգեբանական անթույլատրելի մեթոդներ, զոմբիացնող տեխնոլոգիաներ, իշխանության համապատասխան մարմիններն ինչո՞ւ պիտի անտարբեր մնան կամ զգուշավոր լինեն, չե՞ որ նրանք եւս մեր հասարակության՝ հայ

հասարակության մի մասն են։

Հարկ է նշել, որ հանրության մեջ տարածված այն տեսակետը, թե աղանդների մեջ վտանգավորը «Եհովայի վկաներն» են, թյուրմբռնում է։ Բոլոր աղանդավորներն էլ վտանգավոր են յուրովի։ Բոլորն էլ ղեկավարվում են մեկ կենտրոնից, յուրաքանչյուր աղանդի հատկացված են իրենց

տեղն ու դերը։ Պատկերավոր ասած՝ նրանց միասնական գործունեությունը նման է շեքսպիրյան մի ողբերգության, որտեղ կան բազմաթիվ բացասական կերպարներ։ Պարզապես մեկն իր գործելաոճով ու ցինիզմով մյուսներից տարբերվում է։ Ողբերգությունը ճիշտ հասկանալու համար պետք է բացասական բոլոր հերոսների խաղն ամբողջության մեջ դիտարկել։

Վերջապես՝ «Երբ աղանդավորների եւ խորթ կրոնական այլ կազմակերպությունների ներկայացուցիչներին հալածում, տու-

գանում կամ դատում ենք, նրանք իրենց հավատացյալների շրջանում «սրբանում են», արժանանում հարգանքի ու պատվի» միջոց ինչո՞ւ է տարբերվում մեր հարեւան ազգի (որը տարբեր ցեղախմբերի միաձուլումից է գոյացել) գործելաոճից, երբ իրենց հանցագործներին, առավել եւս՝ քնած մարդուն կացնահարողին հերոսացնում են։

Անդրադառնալով վերնագրին՝ նշենք՝ եկե՛ք զգուշավորությամբ վերաբերվեք «զգուշավորությանը»։

Աշոտ ՍԱՐԳՅԱՆ

Հայ-ամերիկյան գրականության մեջ ուրույն տեղ է գրավում արձակագիր Փիթեր Սուրյանի անունը: Մինչև Սուրյանի գրական երկերը վերլուծելը՝ հակիրճ ներկայացնենք որոշ տեղեկություններ նրա կենսագրությունից: Սփյուռքահայ արձակագիրը ծնվել է 1933 թ. ԱՄՆ-ի Մասաչուսեթս նահանգի Բոստոն քաղաքում: Սուրյանն իր ժամանակաշրջանի առավել կրթված արվեստագետներից է. նա ուսանել է Ֆիլիպսի ակադեմիայում եւ Հարվարդի համալսարանում, սակայն նրա կրթությունն այսքանով չի եզրափակվել: Այագա գրողը որոշ ժամանակով տեղափոխվել է Եվրոպա եւ այստեղ շարունակել կրթությունը. նա մեկ տարի ուսանել է Վերսալի Հոգ վարժարանում, այնուհետեւ եւս մեկ տարի՝ Սալամանկայի համալսարանում: Պատահական չէ, որ հայագի գրողը տիրապետում է եվրոպական չորս լեզվի: Փիթեր Սուրյանը, բացի գրական գործունեությունից, զբաղվում է նաեւ մանկավարժական աշխատանքով. նա անգլերեն է դասավանդում Բարո ընդհանուր: Ինչ վերաբերում է Սուրյանի գրական գործունեությանը, ապա նրա գրչին են պատկանում թվով չորս վեպ, մի քանի կարճ պատմվածքներ եւ էսսեների մեկ ժողովածու: Ի հավելումս՝ ամերիկահայ արձակագիրն զբաղվել է հեռուստա եւ գրաքննադատությամբ: Սուրյանն աշխատել է «Նեյշն» ամսագրում՝ որպես հեռուստաքննադատ: Իսկ այժմ առավել հանգամանորեն անդրադառնալով նրա գրական ժառանգությանը: Եթե ամերիկահայ գրող Էմանուել Վարանդյանը մշակույթը ներկայացնում է որպես ճշմարիտի ու մոլորության խնամքով փշալարված բավիղ, ապա Փիթեր Սուրյանը փորձում է բացահայտել արդի իրականության ազատությունը սահմանափակող մոդելը: Որքան ավելի են Սուրյանի հերոսները ջանում խույս տալ անցյալից եւ ազգային մշակույթի ճնշումից, այնքան ավելի շատ են նրանք ծուղակվում դրանց կողմից: Այն հարցը, թե ինչպես կարող է պատմությունը ծառայել փշրված ճակատագրերով մարդկանց, այդպես էլ մնում է անպատասխան: Փիթեր Սուրյանի ստեղծագործություններում արեւմտյան քաղաքակրթության հենասյուները դարձած թեմաները՝ հոգեբանական մեկուսացում, անորոշության զգացում, կապված հասարակության մեջ ունեցած սեփական տեղի ու դերի հետ, կապվածությունը տվյալ պահի հետ, ուրույն հուզական երանգավորում են ստանում տարագիրների ու նրանց երեխաների կյանքում: Սուրյանն իր ընթերցողներին ցույց է տալիս, թե ինչպես են ազգային փոքրամասնությունները փորձում պահպանել իրենց գոյությունն օտար մշակույթային միջավայրում:

Վերը թվարկված խնդիրները հետզհետեւ առավել խոր քննության են ենթարկվում Փիթեր Սուրյանի յուրաքանչյուր հաջորդող երկում: Սրանում կարելի է համոզվել, եթե համեմատենք նրա առաջին՝ «Մի-



րի» վեպը (1957) երրորդի հետ, որը վերնագրված է «Դարպասը» (1965): Այս երկու գրվածքներում էլ գործող անձինք տուժում են ընտանեկան կամ եթե չէ՝ պատճառներով: «Միրի» վեպում միեւնոյն պատմությունը վերաշարադրված է երեք անգամ՝ տարբեր մարդկանց տեսանկյուններով: Առաջին շարադրողը Միրին է՝ ազգությամբ հույն մի անձնավորություն, որը պատերազմի հետեւանքով փախստական էր դարձել: Պատմության երկրորդ շարադրողը Ջոշն է՝ մեղքի զգացումից տառապող մի մեղմաբար, անգլոսաքսոնացի բողոքական, որը խելահեղորեն սիրահարված է Միրին: Երրորդ շարադրողը Լեքսին է՝ Միրիի՝ Ամերիկայում ծնված զարմիկը, որը Ջոշի հարեւանն է: Պատմության յուրաքանչյուր վերաշարադրումը բացահայտում է եթե չէ՝ ծագման սահմանափակող ազդեցությունը մարդկային ընկալման վրա:

Լեքսի բժախնդրորեն ուրվագծված եթե չէ՝ ժառանգությունը դրոշմ է նրան մշակել տարագիր ծնողների հետ վարվելու նոր ձեւեր: Նրա ապահովության զգացումը հակադրության մեջ է մտնում իր հարեւան Ջոշի կարծրատիպային մեղքի զգացումի եւ հավակնոտության հետ: Ջոշն անգլոսաքսոնացի բողոքականների զավակ է: Նա ապացուցում է, որ այլ ազգերի ավանդույթները վերլուծելն օգնում է ընդգծել սեփական մշակույթի դրական ու բացասական կողմերը: Նա նախանձով է լցված իր հույն ընկերոջ հանդեպ, քանի որ նա կենտրոնականում եւ Էմանուել Վարանդյանի գյուղացի հերոսների պես առօրյա հոգսերից հանգստանալու ենթագիտակցական ունակություն ունի: Նա նախանձում է իր ընկերոջը՝ նաեւ այն պատճա-

ՓԻԹԵՐ ՍՈՒՐՅԱՆԻ ԳՐԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ

ռով, որ վերջինս պատմություններ պատմելու տաղանդով է օժտված:

Փիթեր Սուրյանի գլխավոր հերոսի տենչանքն ընթերցողին հասկանալի է դարձնում նրա ենթագիտակցական ձգտումը դեպի իր զարմուհի Միրին: Երբ Լեքսին խորհում է իր տենչանքի մասին, ընթերցողը հնարավորություն է ստանում հայտնաբերելու տարագիրների երեխաների բնութագրական գծերը: Մի կողմից Լեքսիի ցանկությունը, որ իր զավակները լիովին պահպանեն հունական ինքնությունը, արտահայտում է մի ներմբռնում, որն այս դեպքում միջոց է հանդիսանում սեփական «ես»-ը բացահայտելու համար: Մյուս կողմից՝ ամերիկահայ գրողի երկի հերոսն ադոլեսցենտ կերպով հասկանում է, որ մի երկրում, որտեղ մարդիկ ստիպված չեն ամուսնանալ նույն ազգի ներկայացուցիչների հետ, իր հակումը կարող է տարօրինակ եւ ինքնատիպ համարվել: Ահա թե ի՞նչ է մի անգամ ասում Լեքսին. «Մի ժամանակ ես մտածում էի, որ ես ստիպված պիտի ամուսնանամ ուրեւ հույն աղջկա հետ: Այլապես երեխաներս լիովին չեն պահպանի հունական ինքնությունը: Զգիտես, թե ինչու այդ միտքն ինձ սարսափելի էր թվում» (տե՛ս Sourian P., Miri. New York: Pantheon, 1957, էջ 185): Երբ Լեքսին հասունանում է ու սկսում հետաքրքրվել գեղեցիկ սեռի ներկայացուցիչներով, նրա աչքին բոլոր հույն աղջիկները վանող էին երեւում: «Նրանցից որեւէ մեկի հետ սեր անելու միտքն ինձ աներեւակայելի եւ անհնարին էր թվում: Բայց ես չեմ կարող բացատրել, թե ինչու» (տե՛ս Sourian P., նույն տեղում, էջ 185):

Առնվազն չորս հերոսներ՝ Լեքսին մուտք է գործում հասուն կյանք: Ամերիկայում տարագիրները հնարավորություն են ստանում ազատորեն տրվելու սիրային արկածների եւ որպես կյանքի ընկեր ընտրել այլ ազգերի ներկայացուցիչների: Սակայն երկրորդ սերունդը մշտապես զգում է, որ ինքը պատասխանատու է իր եւ իր զավակների եթե չէ՝ ինքնությունը պահպանելու համար:

Մեկնաբանելով Փիթեր Սուրյանի ստեղծագործությունները՝ գրաքննադատ Նոնա Բալաքյանն ասում է հետեւյալը. «Այժմ շատ հազվադեպ կարելի է հանդիպել այնպիսի գրողների, ում հաջողվել է այսքան հմտորեն ներկայացնել զգացմունքներ ու դիրքորոշումներ ձեւավորող բազմաթիվ ազգակները եւ թույլ ներգործությունները» (տե՛ս Balakian N., «Search for the Elusive Truth», rev. of The Best and Worst of Times by Peter Sourian, Ararat 2 (summer 1961), էջ 58):

Փիթեր Սուրյանի հաջորդ ուշագրավ ստեղծագործությունը «Դարպասը» վեպն է: Վերջինս ավելի ծավալուն եւ բովանդա-

կային առումով առավել բարդ գրվածք է: Ամերիկահայ արձակագրի ստեղծագործության պատկերման առարկան հայ գաղթականներն են, որոնք անկարող են հարմարվել տարագրի կյանքին: Գրքի իրադարձությունները տեղի են ունենում Նյու Յորք Սիթիում: Այդ ընթացքում շատ դեպքեր են կատարվում: Սուրյանի վեպում կան կարճ հետահայաց դրվագներ՝ կապված համիդյան կոտորածների հետ: Գրողը նաեւ ներկայացնում է որոշ իրադարձություններ, որոնք անմիջապես նախորդել էին հայոց Մեծ եղեռնին: Փիթեր Սուրյանն այսքանով չի սահմանափակվում. նա իր երկում նմանապես գետեղում է կարճ դրվագներ, որոնցում պատկերված են հայ գաղթականների հոգեբանական ապրումները 1920-ական թվականներին:

Ամերիկահայ արձակագրի գրվածքում ընթերցողը տեսնում է բազմաթիվ տեսարաններ, որոնցում երեւան է գալիս քաղաքական հայերի ու ամերիկացիների մի ողջ խումբ: Պատմության շարադրողը Փոլ Ստեփանյանն է՝ Թուրքահայաստանից գաղթած ճարտարապետ Սարգիս Ստեփանյանի որդին: Խոսելով իր գրվածքի նպատակների մասին՝ Փոլը հույս է հայտնում, որ իրեն կհաջողվի ինչ-որ բան «հնարել» իր տարագիր ընտանիքի անցյալի հիման վրա: Նա հույս ունի, որ ինքը կկարողանա այդ «հումքից» երեւելի «ալքիմիա» ստեղծել (տե՛ս Sourian P., The Gate. New York: Harcourt, Brace and World, 1965, էջ 89): Ընթերցողի մոտ մի հարց է ծագում. արդյո՞ք գրքի հերոսին հաջողվում է ստեղծել այդ երեւելի ալքիմիան, այն համադրությունը, որն անհրաժեշտ է պատմվածքի բազմազան դրվագները եւ բովանդակային շերտերը ըմբռնելու համար: Պատմությունը լույս շաղկապված չէ թերթերի ու փաստագրական ակնարկների, նամակների եւ ամսագրերի, զավեշտական պատմությունների, կարճ հետահայաց դրվագների, գրույցների եւ ներքին մենախոսությունների հետ: Ստեղծագործական ձեւի եւ բովանդակության միջոցով գրողն արտահայտում է Փոլի պատկերացումները ճշմարտության մասին. «Ճշմարտությունը կարծես մի մեծ ձուկ լինի, որը երբեւէ ամբողջական չի եղել» (տե՛ս Sourian P., նույն տեղում, էջ 233): Անկարող լինելով ամբողջական տեսքով տեսնել ճշմարտությունը՝ գրքի գործող անձինք «նետի պես սլանում են ուր ասես» եւ չեն կարողանում համարել հակադիր ազդակները, որոնք աշխուժություն են հաղորդում մարդու գիտակցականին: Ու քանի որ այդ մարդիկ չեն կարողանում հասնել ներքին հետեւողականության ու կայունության, երկակի եւ թույլ ժեստերն ու գործողությունները աղճատում են մարդկային շփումը:

Շարունակությունը՝ էջ 5

ՀԱՅՐԵՆԱՊԱՏՈՒՄԸ ՆՈՐ ԻՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԱՌՋԵՎ


Սկիզբը՝ էջ 4

Ժայթքում առաջին» (1923), «Աշխատանքային» (1924), «Երգ կառուցման եւ հաղթանակի» (1930), «Մաքառումներ» (1933) ժողովածուները, «Վաթսուներորդ հորիզոնում» (1934) վեպը, Մկրտիչ Արմենի «Շիրկանալ» (1926), «Կոմսոմոլիա» (1926), «Երկաթավորվող երկրի երգեր» (1927) ժողովածուները, «Գազային երազ» (1931) պոեմը, «Քաղաքը բլուրի վրա» (1930), «Երեւան» (1931), «Սկաուտ N 89» վեպերը, Հրաչյա Քոչարի «Օգտեն Վասյուրի ճանապարհորդությունը» (1937) վիպակը, Հակոբ Հակոբյանի «Բոլշեւիկն է Շիրկանալը» (1934) եւ «Վոլխովստոյ» (1935) պոեմները:

Այս բոլոր գրքերը՝ բանաստեղծական

ժողովածուներ, պոեմներ, պատմվածքներ, վեպեր, վիպակներ, թատերգական երկեր, հիշված անուններին ավելացրած նաեւ շատ այլ հեղինակների բազմատեսակ երկեր, կոչված էին պատկերելու նոր կյանքը եւ ամրապնդելու սոցիալիստական հայրենասիրության գաղափարները:

Բայց միեւնոյն ժամանակը ծնունդ տվեց նաեւ, հիրավի, հայրենասիրական բազմաթիվ երկերի, որոնց համար պատրաստ էին «նացիոնալիզմ», «ինդիվիդուալիզմ», «փախուստ սոցիալիստական իրականությունից» եւ այդ օրերին բնութագրական այլ մեղադրանքներ: Հիշատակենք նաեւ այդ գրքերը, որպեսզի ժամանակի գրական պատկերը լինի ավելի ամբողջական. Եղիշե Զարենց՝ «Երկիր Նաիրի»



Գուրգեն Մահարի, Համո Մահյան

(1921-1924), «Էպիկական լուսաբաց» (1930), «Գիրք ճանապարհի» (1933-1934), Դերենիկ Դեմիրճյան՝ «Քաջ Նազար» (1923), «Գիրք ծաղկանց» (1935), «Երկիր

հայրենի» (գրել է 1937-1939-ին), Ստեփան Զորյան՝ «Ցանկապատ» (1923), «Պատերազմը» (1925), «Մի կյանքի պատմություն» (հհ. 1-2, 1935-1939), Վահան Թոթովենց՝ «Կյանքը հին հռոմեական ճանապարհի վրա» (1930-1933), Ալսեկ Բակունց՝ «Մթնածոր» (1927), «Սեւ ցելերի սերմնացանը» (1933), «Կյորես» (1936), Գուրգեն Մահարի՝ «Մանկություն» (1929), «Պատանեկություն» (1930), «Սրգահաս» (1933), Չապել Եսայան՝ «Կրակե շապիկ» (1934), «Սիլիստրի պարտեզները» (1935), Լեռ Կամսար՝ «Անվավեր մեռելներ» (1924), «Ազգային այբբենարան» (1926), «Վրիպած արցունքներ» (1934), Մատթեոս Դարբինյան՝ «Կիկոս» (1929), Մկրտիչ Արմեն՝ «Հեղճար աղբյուր» (1935), Խաչիկ Դաշտենց՝ «Երգերի գիրք» (1932), «Բոց» (1936) եւ այլն:

Շարունակելի

Դավիթ ԳԱՍՊԱՐՅԱՆ

Բանասիրական գիտ. դոկտոր, պրոֆեսոր

ՀՈԿՐԱՆՆԵՍ ԹԼԿՈՒՐԱՆՑԻՆ ՍԻՐՈ ՏԱՂԵՐԳՈՒ. ՍԻՐՈ ՀՈԳԵԲԱՆՈՒԹՅՈՒՆԸ «ՀՈԿՐԱՆՆԵՍԻ ԵՎ ԱՇԱՅԻ» ՍԻՐԱՎԵՊՈՒՄ

Միջնադարյան տաղերը հայ բանաստեղծության արժեքավոր եւ անբաժանելի մասն են կազմում: Առանց տաղեր-գության հնարավոր չէ պատկե-րացնել մեր գրականության ամ-բողջական պատմությունը: Լինե-լով ժողովրդի պատմական, ազգա-յին եւ հոգեւոր կյանքի գեղարվես-տական դրսևորումները՝ տաղերն ունեն ե՛ւ ճանաչողական, ե՛ւ գաղա-փարական ուրույն նշանակություն, որովհետեւ միջնադարյան հայ մար-դու ներաշխարհի, հույզերի ու ապ-րումների, նրա պատկերացումնե-րի ու մտածելակերպի արտացոլն են, նրա երազների, տագնապների ու տարակույսների, արտաքինի ու ներքինի, գեղեցկությունների ու սի-րո սքանչելի արտահայտությունը: Այս առումով խիստ բնորոշ են Հոկ-իաննես Թլկուրանցու վիպական տաղերը:

Թլկուրանցին միշտ էլ հայ միջնադարյան բանաստեղծու-թյունը հետազոտողների ուշադ-րության կենտրոնում է եղել, սա-կայն, որքան էլ զարմանալի է, ի տարբերություն նրա սիրո տա-ղերգության, վիպական տաղերն անբավարար են ուսումնասիրվել ու գնահատվել: Իրականում վի-պական տաղերը եւս առանձնա-պես կարեւոր են բանաստեղծի չափածոյի ընդհանուր համա-կարգում, քանի որ ինչ-որ չափով ավելացնում են հայ միջնադա-րյան պոեզիայի էպիկականու-թյունը, որը նրանում համեմա-տաբար թույլ է արտահայտվել: Հոկիաննես Թլկուրանցին միջնա-դարյան առաջին բանաստեղծն է, որն ստեղծել է վիպական տաղեր՝ մշակելով ժողովրդական բանա-հյուսությունից վերցված սյուժե-ներ, որոնք այսօր էլ միջնադա-րյան քնարերգության առավել արժեքավոր էջերից են: Դրանցից մեզ են հասել «Աշայի եւ Յովհան-նեսի», «Գեղ մի կայր Նարեկ ա-սեն», «Տաղ սրբոյն Ալեքսանու-սի», «Տաղ վասն Սուրբ Յովհան-նու գլխատման», «Մեկնութիւն Արարածոց» տաղերը, որոնց մեջ երեւում է զգայուն, աշխույժ, ինք-նատիպ քնարերգակը՝ իրեն հա-տուկ գունագեղ ու թրթռուն ոճով:

Հոկիաննես Թլկուրանցու բա-նաստեղծության գեղարվեստա-կան ուժն ամենից առաջ արտա-հայտվել է սիրո թեմայով գրված ստեղծագործություններում: Նա թեեւ անմիջականորեն շարունա-կում է իր նախորդին՝ Կոստան-դին Երզնկացուն, սակայն ձգ-տում է ավելի մատչելի ձեւերի: Նրան հատուկ չեն Երզնկացու հոգու խռովքն ու դրաման: Թլ-կուրանցին ավելի շատ վայելքի ու գեղեցկության, գմայլանքի ու հիացումի բանաստեղծ է: Նրա գործերում երեւում է նաեւ Գրի-գոր Նարեկացու հեռավոր ազդե-

ցությունը: Թլկուրանցին ե-րեւի շատ է սիրել մեծ բա-նաստեղծի «Շննդյան մե-ղեդին», որովհետեւ վերջի-նիս որոշ պատկերներ ու արտահայտություններ, թե-թեւ փոփոխության ենթար-կելով, կիրառում է առան-ձին երգերում, ինչպես՝ «Շոնց է լըցած սպիտակ վարդով», «Շոնց է դը-րախտ անմահութեան», «Աչերդ է ծովեր, խումար ու մետան», «Շով-ծով աչեր ու լուս քընար» (Հոկի. Թլ-կուրանցի, Տաղեր, աշխա-տասիրությամբ Էմ. Պիվա-գյանի, Եր., 1960) եւ այլն:

Թլկուրանցու տաղերում ակներեւ է սիրող մարդու հոգու թրթռոց, ամեն ինչ կարծես բխում է քնարերգուի սրտից, եւ պատա-հական չէ, որ Ղ. Ավիշանը նրան բնորոշել է իբրեւ «ամենն ավելի բանաստեղծ եւ տաքսիրտ» (Ղ. Ա-վիշան, Յուշիկը հայրենեաց հա-յոց, հ. 2, Վենետիկ, 1870, էջ 125): Իսկապես, Թլկուրանցու եր-գերում սիրո գաղափարը կատա-րյալ պաշտամունքի առարկա է, քանզի երբ սերը տիրապետում է մարդու հոգուն, նա դառնում է հլու-հնազանդ, տարերայնորեն ենթարկվում սիրո՝ Աստծու կող-մից սահմանված պահանջներին: Ինքը՝ Թլկուրանցին, խոստովա-նում է, որ սիրո խելագար է դար-ձել: Եվ բոլորովին էլ պատահա-կան չէ, որ տաղերի վերնագրե-րում, հատկապես դրանց վերջին տողերում, իր անունը հիշում է իբրեւ «Խեւ Յովհաննես» (Հոկի. Թլկուրանցին, Տաղեր, էջ 135):

Հարիր տարու հաբեղանին,
Որ ճերմակն է դարձեր դեղին,
Կտրե՛ գըուստիկ

պատարագին
Ու գրե՛զ ուզե՛ առջեւ խաչին:

Սիրո երգերի քնարական հե-րոսն ինքը՝ բանաստեղծն է: Տաղե-րը կարեւորվում են ոչ միայն իրենց պատկերային առանձնահատկու-թյուններով, այլեւ ընդգրկման խո-րությամբ: Քնարական հերոսը, իբ-րեւ միջնադարի մարդ, երբեմն հի-շում է, որ իր արարքը եկեղեցու եւ հավատի պահանջներին չի հա-մընկնում, ուստի ինքը մեղա է գա-լիս, բայց եւ խոստովանում, որ ան-գոր է ամենակարող սիրո առջեւ (Սույն տեղում, էջ 132):

Քանի տեսնում՝
կու սարսափիմ,
Սիրտս ի փորիս կաննու
գալար.



Ինձ մեղադիր լե՛ր կու լինիք՝
Ով որ տեսնու չի մնայ արդար:

Բանաստեղծն իրեն համեմա-տում է սիրո տոչոր այն թիթեռի հետ, որը մթության մեջ պտտվում է մոմի շուրջը՝ այրվելով ու չհաս-նելով իր երագին: Մի այլ տաղում Թլկուրանցին զուգարդում է Աստ-ծուն եւ սիրած աղջկան ու չի կա-րողանում որեւէ մեկին առավելու-թյուն տալ: Մեկը հրապուրում, նրան տանում է իր հետեւից, մյու-սը վերհիշել է տալիս բարեպաշտ մնալու մասին պատգամները (Սույն տեղում, էջ 127):

Բայց ինչ անեմ, ճարակ չըկայ,
Մահու մեղաց ներքեւ եմ ես,
Հայիմ ի քեզ, հայիմ ի նայ,
Որ ի հողոյ ստեղծեր է գրե՛զ:

Իսկ ի՞նչ է տեսնում բանաս-տեղծը սիրած էակի եւ սիրո մեջ: Սերը մի կատարելություն է, որ կարող է գայթակղել Նույնիսկ Աստծուն: Սիրո մարմնացում աղ-ջիկը, ըստ բանաստեղծի, Աստծու ընտրյալն է. (Սույն տեղում, էջ 129):

Շոնց է դըրախտ
անմահութեան,
Անմահական պըտղով

դըրախտ,
Դու օրինակ ես աղէկներուն,
Չքեզ սիրե՛ Աստուած եւ մարդ:

Եթե այդպես է, բնականաբար, մահկանացու Թլկուրանցին պետք է տեղի տար սիրո առաջ: Այսքան սիրով բանաստեղծը մերժման դեպքում Նույնքան էլ խորապես ցավ ու ողբերգություն է ապրում: Եվ երբ սիրո ճանապարհին նրա երազների կինը չի արձագանքել, չի հասկացել ու մերժել է, բանաս-տեղծը դառնորեն հուսահատվել ու իր բողոքի խոսքն է ասել (Սույն տեղում, էջ 138):

Ես իմ սրտիս դանակ ածեմ,

Չաչքս ճաղի տամ հա-նելու...

Իսկ «Տաղ Յովհաննե-սի վասն սիրոյ» (Միջնա-դարյան քնարերգության զարդերից մեկն է այս տաղը, որի մասին Ա. Հո-պանյանը իրավամբ գրում է. «Եթե ապացուց-վի, որ սիրերգին հեղինա-կը Յովհաննես Թլկուրան-ցին է, այդ արդեն իսկ գմայլման արժանի քեր-թողը ավելի եւս պիտի մե-ծանայ մեր աչքին, որով-հետեւ այս կտորը ավելի խոր է եւ ուժեղ, քան Թլ-կուրանցիի մյուս մեզի ծանոթ սիրերգները» (տե՛ս «Հայ էջեր», Փարիզ, 1912, էջ Լ2) սքանչելի բանաս-տեղծության մեջ մեզ ներկայա-նում է կյանքից դառնացած Թլ-կուրանցին, որին նենգել ու խաբել են, եւ հիմա անսփոփ՝ իր դժբախտության պատմու-թյունն է անում: Թեեւ սիրած էակն անչափ դաժան է գտնվել նրա նկատմամբ, բայց իրենց բաժանման բուն պատճառը բանաստեղծը համարում է չա-րական մարդկանց (Հոկի. Թլ-կուրանցին, Տաղեր, էջ 218):

Ո՛ր է դավըդ, ո՛ր է երդումս,
որ բռնեցաք զաստուած վըկայ,
Ի զատ ընկաք օտարացաք,
չարկամն եղեւ մեզ մահանայ:



Պարզ երեւում է, որ Թլկու-րանցին անմացորդ սիրահար է եղել, եւ որ իր զգացմունքները շինծու չեն, այլ՝ անձնական խոր ապրումի արտահայտություն: Եվ բնական է, որ սիրո խենթությա-նը հանձնված տաղերգուն վի-պական բանաստեղծության կյուր է դարձրել սերը: Սիրային մի գեղեցիկ ստեղ-

ծագործություն է «Այս ի՞նչ կրակ եր գիս այրեց» տաղը, որը միջ-նադարյան քնարերգության մեջ վիպական առաջին քերթավածն է, ուր արտահայտված են սիրո ամենագոր ուժն ու զորությունը (Սույն տեղում, էջ 226):

Այս ի՞նչ կրակ եր գիս այրեց,
Կամ ի՞նչ խաւար՝ որ գիս
պատեց,
Ես վեմ անխախտ էի՝
խախտեց,
Պողպատ ամուր՝ գետ ջուր
հալեց:

Բանասիրության մեջ փորձ է արվել սիրո այս գողտրիկ տաղը կասկածանքով վերագրել Թլ-կուրանցուն, սակայն աներկա-յելի է, որ դրա հեղինակը մեծա-տաղանդ սիրերգակ բանաս-տեղծ է, ավելին՝ այս տաղը եւս նրա աստվածային շնորհի գո-րեղ արտահայտություններից է: Բանասերներ Կ. Կոստանյան-ցը, Ա. Սրապյանը եւ այլք վիճե-լի թվացող այս տաղը վերագրել են Հոկիաննես Երզնկացուն, ու-րիշները (Ա. Մանցականյան) համարել են ժողովրդական ստեղծագործություն (տե՛ս Կ. Կոստանյանց, Նոր ժողովածու, Դ պրակ, 1896, էջ 11-15, Ա. Սրապյան, Հոկիաննես Երզն-կացի Պլուզ, Եր., 1993, Ա. Մա-ցականյան, Հայկական միջնա-դարյան ժողովրդական երգեր, Եր., 1956, էջ 514): Սակայն այս

կարծիքներն անընդունելի են, քանի որ գեղեցիկ սիրապա-տումն անհատական ստեղծա-գործություն է եւ արդարեւ պատկանում է Թլկուրանցուն, որի հաստատման համար կան որոշակի հիմքեր:

Շարունակելի
Վարդան ԵՐԽԱՉԱՐՅԱՆ
Բանասիրական գիտ. թեկնածու

ՓԻԹԵՐ ՍՈՒՐՅԱՆԻ ԳՐԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ

Սկիզբը՝ էջ 4

Վախվորած ու միեւնույն ժամանակ ցասումով լի հայազգի հերոսները ցույց են տալիս, թե ինչպես են պատմական իրա-դարձությունները դուրս հորդում երկ-փեղկված շարժառիթներից, որոնք չա-րամտորեն օգտագործվում են մոլեռանդ-ների կողմից: Սփյուռքահայ արձակագրի վեպը, հանդիսանալով մոլեռանդության եւ մարդկային անհետեւողականության ուսումնասիրություն, մեզ պարտադրում է վերանայել հայ ժողովրդի պատմական անցյալը, դրանում եղած բազում հուսա-խաբությունները: Բուն մեկուկուսամյա գլ-խավոր գործող անձինք են Բողոս Բողո-սյանը՝ հումորի զգացումից կատարելա-

պես զուրկ մի անձնավորություն, ով հա-վակնում է «մտավորական» համարվե-լուն, իսկ մյուս հերոսը Սարգիս Ստեփա-նյանն է՝ Փոլի հայրը: Ընթերցողը հնարա-վորություն է ստանում հետեւելու այս տա-րագիրների փոխհարաբերություններին՝ սկսած Կոստանդնուպոլսից մինչեւ դրա-մատիկ վախճանն Ամերիկայում:

Արտաքուստ մարդիկ հակադիր են գրեթե բոլոր առումներով: Բողոսյանը հի-նավուրց երկրից եկած մի «մտավորական է»: Նա իրեն այնքան լուրջ է պահում, որ դա արդեն ծանծրույթ է առաջացնում: Սու-րյանի այս հերոսը պատրաստակամ է չի-նայել իր եւ ուրիշ մեկի մեկ կաթիլ արյունն անգամ՝ հանուն ազգային շահերի (տե՛ս

Sourian P., Նույն տեղում, էջ 313): Իրենից առաջ ապրած սահմանափակ ազգայնա-մոլների պես Բողոսյանը տարիներով Հա-յաստանի մեկ այլ պատմություն է գրում: Նա դա անում էր մի ազգի համար, որը խճճված դրության մեջ էր հայտնվել իր իսկ անխիտեմության պատճառով: Ինչ-պես ասում է Փոլը, նրա միակ անմոռանա-լի հատկությունն այն է, որ նա «անվարժ է լեզվի մեջ» (տե՛ս Sourian P., Նույն տեղում, էջ 153): Հավելենք նաեւ, որ Սուրյանի երկի հերոսը՝ Բողոսը, յուրօրինակ մոտեցում ունի սիրային հարաբերությունների հան-դեպ: Տեսնելով, թե ինչպես է տղամարդը հպվում կնոջը՝ նա մեքքով է շրջվում: Թվում է, թե նա կատարելապես զուրկ է

կրքից եւ անմիջականությունից:

Բողոսյանը փորձում է վերակենդա-նացնել անցյալի հերոսներին ու հին ար-ժեքները: Նրա առասպելական հերոսնե-րը՝ Սասունցի Դավիթը, Տիգրան Մեծը, Չեյթունի լեռնեցիները, ավելի ուժգին են դարձնում վրեժխնդիր լինելու հիվանդա-գին տենչանքը:

Բողոսյանի կողմից անձնավորված սաստիկ մոլեռանդությունը վերածվում է վերջին շրջանի հայոց պատմության փոր-ձաքարի, այն ժամանակ, երբ մենք հա-մադրում ենք քուրդ կողոպտիչների, թուր-քերի իրականացրած կոտորածների, Թա-լեաթ փաշայի սպանության, ներքին քա-ղաքական տարածայնությունների եւ ար-քեպիսկոպոս Թուրյանի սպանության վե-րաբերյալ խառը պատմությունները:

Շարունակելի
Տիգրան ՍԱԼՈՒՅԱՆ
Բանասիրական գիտ. թեկնածու

ԿԻՑ սենյակում

Վասծո Խոսք Կարո Է Վերվառնել Մարդո՛ւ ԿՅՎՆԲԸ

Մեր հյուրն է Մարկոս ԲԻՆ. Մանգասարյանը

- Ավետարաններում, ինչպես նաև «Գործք առաքելոց»-ում եւ Պողոս առաքյալի մի շարք թղթերում հիշատակվում են Հիսուսի զարմիկները կամ Նրա մոտ ազգականները՝ իբրեւ տյառնեղբայրներ՝ Զրիստոսի եղբայրներ: Ինչպե՞ս հասկանալ, չէ՞ որ Զրիստոսը սբ Կույս Մարիամ Աստվածածնի միակ Զավակն էր: Այս հարցը միշտ էլ թուրքմբռնումների եւ վիճաբանությունների տեղիք է տվել: Ինչպե՞ս ճիշտ հասկանալ եւ ընկալել ավետարանական այս հատվածը: Ովքե՞ր են Զրիստոսի քույրերն ու եղբայրները:

- Այո՛, Ավետարանում՝ բազմաթիվ տեղերում, խոսվում է Զրիստոսի եղբայրների եւ քույրերի մասին: Արեւելյան ժողովուրդները մոտ ազգականներին եղբայր եւ քույր անվանելու սովորությունն ունեին, իրենցները՝ նույնպես: Հին Կտակարանից էլ կարող ենք օրինակներ հիշել: Աբրահամը Ղովտին իր եղբայրն է անվանում, մինչդեռ նրանք եղբայրներ չէին... Արեւմտյան (կաթոլիկ) աշխարհում տարածված մի կարծիքի համաձայն՝ Հովսեփը, մինչ Աստվածամորն իր տուն տանելը, ամուսնացած է եղել եւ զավակներ է ունեցել, որոնք էլ անվանվել են Զրիստոսի եղբայրներ են քույրեր: Բայց եթե անդրադառնանք Մաղաքիա արք. Օրմանյանի «Համապատում» գրքին, որտեղ տրված է չորս Ավետարանների մանրամասն մեկնությունը, մեզ համար «սուրբ ընտանիքի» գաղափարը կամբողջանա: Եթե ընդունենք, որ Հովսեփը միայն Աստվածամորն է որպես կին վերցրել, եւ գիտենք, որ նա Աստվա-

ծամոր խնամակալն էր եւ ոչ՝ ամուսինը, հետեւաբար Հովսեփը կին եւ զավակներ չի ունեցել նախկինում: Մեր Եկեղեցու ոչ պաշտոնական դիրքորոշման համաձայն՝ երբ խոսում ենք Զրիստոսի եղբայրների եւ քույրերի մասին, նկատի ունենք Մարիամ Աստվածածնի մորաքրոջ զավակներին, զարմիկներին: Մատթեոսի Ավետարանում նրանք անունները տրված են՝ Սիմոն, Հուդա, Հակոբոս, Հովսեփ: Ավետարանն ասում է, որ նրանք երկուսի մայրը Կղեովպասի կին Մարիամն էր, ով Մարիամ Աստվածածնի մորաքույրն էր: Այսպիսով՝ տեսնում ենք, որ կա ազգակցական կապ, բայց ոչ՝ հարազատ եղբոր հանգամանքը:

- Զրիստոսը խաչի վրայից Իր մորը հանձնեց Հովհաննես առաքյալի հոգածությանը: Եթե հարազատ եղբայրներ ունենար, ինչո՞ւ պիտի Իր մորը հանձներ Հովհաննեսի խնամքին:

- Այո՛, անշուշտ, շատ անգամ մենք տեսնում ենք, որ մարդիկ ավելի մտերիմ են իրենց հետ աշխարհակցական կապ չունեցող մարդկանց հետ, ում հետ գաղափարական, հավատքի նույնությունն ունեն, այսինքն՝ տարբեր քրիստոնյաներ հաճախ իրար հետ ավելի մոտ, ջերմ հարաբերություններ ունեն, քան իրենց տան անդամների հետ: Զրիստոսը Մատթեոսի Ավետարանում ասում է. «Մարդու թշնամիներն իր տնեցիները կլինեն»: Մեկ այլ տեղ էլ՝ Մարկոսի Ավետարանում (Գ 21) կարդում ենք, թե ինչպես մի անգամ Զրիստոսը, բազում հրաշքներ կատարելով,



քարոզություններից հետո տուն եկավ, հետո նորից գնաց, քանի որ մարդիկ սպասում էին Նրան. ոչ հանգիստ ուներ, ոչ քուն: Եվ Նրա հարազատները (տնեցիները) եկան Նրան տանելու, քանի որ, ինչպես ավետարանիչն է ասում, «Կարծում էին, որ խելքը կորցրել է» (Մարկ. Գ 21):

- Տե՛ր հայր, ինչո՞ւ հարազատներն այդպես կարծեցին:

- Նրանք չէին պատկերացնում, որ մարդը կարող է ավելի քիչ ժամանակ հատկացնել այս աշխարհին, քան իր քարոզչությանը, առաքելությանը, ինչի համար աշխարհ էր եկել: Չարմանալի է, բայց կարող ենք գուցա հեռուներ անցկացնել այսօրվա իրականության հետ: Եկեղեցու հավատավոր շատ զավակներ հաճախ իրենց տան ներսում խնդիրներ են ունենում, երբ հարց է լինում, թե ինչու են ամեն կիրակի գնում պատարագի կամ

ուխտագնացությունների եւ այլն: Այսինքն՝ հաճախ մարդիկ, ովքեր աղոթքի, պատարագի արժեքը չեն հասկանում, զարմանում են: Ղուկասի Ավետարանում ասվում է, որ մայրն էլ նրանց հետ էր, բայց ես չեմ ուզում, որ կարծիք ստեղծվի, թե նա էլ չգիտեր, որ Զրիստոսն անդադար քարոզչությունների մեջ պիտի լինի, պարզապես դեռ ժամանակը չէր, որ նա կարողանար ասել Զրիստոսի մասին ճշմարտությունը: Համատես Ավետարաններում կա այս դրվագը: Հովհաննեսը մոտ մեկ տողով է խոսում եղբայրների հետ հանդիպման մասին: Ղուկասն ասում է, որ մայրն ու եղբայրները բազմության պատճառով չկարողացան ներս գալ, մյուսներն էլ են դա շեշտում: Եվ երբ նրանց գալու մասին Զրիստոսին իմաց են տալիս, ասում է. «Իմ մայրն ու եղբայրները սրանք են, որ

Աստծու խոսքը լսում եւ կատարում են»: Ղուկասն ասում է. «Աստծո խոսքը լսողներն ու կատարողներն են Իմ եղբայրներն ու քույրերը...», իսկ Մատթեոսի եւ Մարկոսի Ավետարաններում այսպես է գրված. «Իմ քույրերն ու եղբայրները նրանք են, ովքեր կատարում են Իմ Հոր կամքը, որ երկնքում է»: Ավետարանական այս հատվածներն իրար փոխընդանուր են: Սա բացատրելու համար հիշենք «Հայր մեր» աղոթքը: Տերունական աղոթքի մեջ խնդրում ենք. «Եկեցե՛ք արքայութիւն Զո, եղիցիւն կամք Զո՛ որպէս յերկիսն եւ յերկրի»: Այդ արքայութեան գալը կլինի այն ժամանակ, երբ Տիրոջ կամքը կատարվի ինչպես երկնքում, այնպես էլ երկրի վրա: Փորձենք հասկանալ՝ ի՞նչ է երկնքի արքայությունը: Շատերը կարծում են, որ երկնքի արքայությունը վրա է հասնելու հետմահու կյանքում, բայց անդրադառնանք մի հետաքրքիր փաստի: Մատթեոս, Մարկոս եւ Ղուկաս ավետարանիչներից միայն Մատթեոսն է ասում «երկնքի արքայություն», Մարկոսը եւ Ղուկասը շեշտված կերպով ասում են՝ «Աստծո արքայություն»: Մատթեոսը քսանինն անգամ խոսում է արքայության մասին եւ միայն չորս անգամ է ասում «Աստծո արքայություն»՝ մեկ պարզ պատճառով. իրենցների սովորությունն էր, նաեւ՝ տասը պատվիրաններից մեկն ասում է, որ Աստծո անունը չի կարելի գուր տեղն ասել: Մատթեոսը վախենում էր, կարծեք, քանի որ իր լսարանը իրենց էին:

Շարունակությունը՝ էջ 8

Քլայվ ԼՈՒԻՍ

Սկիզբը՝ թիվ 3-6, 8-15

Բրիտանացի հանրահայտ գրող Քլայվ Լուիսի վերոհիշյալ գործը քրիստոնեական թեմաներով երգիծական մի ստեղծագործություն է, որ ներկայացնում է Խառնակիչ կոչվող դեւի նամակները նրա զարմիկ Օշինդրին: «Խառնակիչ նամակները» ստեղծագործությունը՝ որպես առանձին գիրք, առաջին անգամ հրատարակվել է 1942 թվականին:

17

Իմ սիրելի Օշինդրիկ,

Այն արհամարհական ձեւը, որով դու քո վերջին նամակում խոսում ես որկրամոլության մասին որպես հոգիներ որսալու միջոցի, միայն քո տգիտությունն է ցույց տալիս: Վերջին հարյուրամյակի մեծագույն ձեռքբերումներից մեկը եղել է այդ նյութի վերաբերյալ մարդկանց գիտակցությունը քարացնելը, այնպես որ այժմ Եվրոպայի ամբողջ երկայնքով ու լայնությամբ դու դժվար թե գտնես մի այնպիսի քարոզ կամ խիղճ, որին հուզի սա: Սա հիմնականում արդյունքն է նրա, որ մենք մեր բոլոր ջանքերը կենտրոնացրել ենք նրբաճաշակության որկրամոլության եւ ոչ թե շվայտության որկրամոլության վրա: Զո խնամարկյալի մայրը սրա լավ օրինակ է, ինչպես ես տեսնում եմ նրա վերաբերյալ թղթերից, իսկ դու էլ հավանաբար իմացել ես Զերթիկից: Այդ կինը կգարմանար (հույս ունեմ՝ մի օր կգարմանա) իմանալով, որ իր ամբողջ կյանքը ծառայեցվել է զգայականության այս տեսա-



կին, որն ամբողջողվին ծածկված է նրանից այն իրողության շնորհիվ, որ կերակրի քանակությունները փոքր են: Բայց ի՞նչ կապ ունի քանակությունը, եթե մենք կարողանում ենք մարդկանց որովայնն ու քիմքը գործածել՝ ծնելու համար գանգատներ, անհամբերություն, քարստություն եւ սեփական անձի վրա կենտրոնացում: Զերթիկն այս կնոջը լավ է պահում իր ձեռքում: Այս կինը դրական ահաբեկչություն է հյուրընկալների եւ մատուցողների համար: Նա միշտ հրաքարվում է իրեն առաջարկվածից՝ կեղծ քարոզավարի թեթեւշանով ու ժպիտով ասելով. «Օ ո՛հ, խնդիր

րում եմ... ես միայն մի բաժակ թեյ եմ ուզում, թույլ, բայց ո՛չ շատ, եւ մեկ էլ մի շա՛տ բարակ ու լավ խոթաբանություն բոված հացի շերտ»: Հասկանո՞ւմ ես: Զանի որ այն, ինչ նա ցանկանում է, ավելի փոքր ու էժան է, քան ինչ որ մատուցվել է, նա իր ուզածը ստանալու դիտավորության մեջ որկրամոլություն երբեք չի տեսնում, որքան էլ որ այն անհանգստություն պատճառի ուրիշներին: Իր ախորժակը բավարարելիս նա կարծում է, թե չափավորություն է ցուցաբերում: Բազմամարդ ռեստորանում, երբ գերհոգնած մատուցողուհին նրա առաջ դնում է պնակը, նա թեթեւ ճիչ է արձակում եւ ասում. «Օ՛հ, դա շա՛տ-շատ է: Դա տարեք եւ բերեք մոտավորապես դրա քառորդի չափով»: Եթե նրանից բացատրություն պահանջեն, կասեր, թե այդպես վարվում է վատնումից խուսափելու համար, իսկ իրականում նա դա անում է, որովհետեւ նրբաճաշակության այն հատուկ տեսակը, որին մենք ծառայեցրել ենք նրան, վիրավորվում է տեսնելով իր ուզածից ավելի մեծ քանակի կերակուր: Տարիներ շարունակ այս տարիքավոր կնոջ համար Զերթիկի կատարած հանգիստ ու համեստ աշխատանքը կարող է չափվել նրանով, որով որովայնն այժմ տիրական տեղ է զբաղեցնում այս կնոջ ամբողջ կյանքում: Այս կինը մտքի այն վիճակում է, որը կարելի է կոչել «Այն ամենն, ինչ ուզում եմ»: Այն ամենը, ինչ նա ուզում է, մի բաժակ թեյ է՝ ճիշտ պատրաստված, կամ մի

ծու՝ ճիշտ եփված, կամ հացի մի շերտ՝ ճիշտ բովված: Բայց նա երբեք չի գտնում որեւէ սպասավոր կամ ընկեր, որ կարողանա այս պարզ բաները «ճիշտ» անել, որովհետեւ նրա «ճիշտ»-ը բողաբկում է ճշգրիտ եւ համարյա անկարելի քմային հաճույքների անհագ պահանջ, որոնք նա կարծում է, թե հիշում է անցյալից. մի անցյալ, որ նա նկարագրում է որպես «օրեր, երբ դու կարող էիր լավ սպասավորներ գտնել», բայց որոնք, ինչպես մենք գիտենք, օրեր էին, երբ նրա զգայարանները հեշտությամբ էին բավարարվում եւ նա ուրիշ հաճույքներ ուներ, այնպիսիք, որոնք նրան չէին ստիպում սեղանի հաճույքներից այդքան կախում ունենալ: Մինչդեռ առօրյա հուսախաբությունը ծնում է առօրյա վատ պահվածք. խոհարարները նկատողության գրություն են տալիս, իսկ ընկերությունը սառնում է: Եթե երբեւէ թշնամին թեթեւակի կասկած է արթնացնում նրա մտքում, թե նա չափից շատ է կերակրով զբաղված, Զերթիկը հակադարձում է նրանով, որ այդ կնոջը ստիպում է ենթադրել, թե նա դեմ չէ նրան, ինչ անձամբ ինքն է ուտում, այլ թե «ցանկանում է, որ իր տղայի՝ համար ամեն ինչ լավ լինի»: Իրականում, իհարկե, նրա ազահությունը երկար տարիներ նրա որդու առտնին անհարմարավետության գլխավոր աղբյուրներից է եղել: Իսկ քո խնամարկյալն իր մոր տղան է:

Շարունակությունը՝ էջ 8

ԽՈՍՔ ՀԻՇԱՏԱԿԻ



Ցավով տեղեկացնում ենք, որ օգոստոսի 19-ին՝ 59 տարեկան հասակում, կյանքից հեռացավ ճանաչված լրագրող և մշակութային գործիչ, «Քրիստոնյա Հայաստան» երկշաբաթաթերթի թղթակից Հայկ Կարապետյանը: Լուսավոր, պայծառ, ազնիվ, անքն, մարդասեր ու ներող, նախանձախնդիր բարոյն, անարդարության դեմ ընդվզող և երբեք իր սկզբունքներին դեմ չգնացող Մարդ, ում ապրած կյանքը եղավ սիրո և նվիրումի ընթացք: Հ. Կարապետյանը երկար տարիներ աշխատել է Հանրային ռադիոյի տարբեր բաժիններում: Լինելով հավատավոր զավակը Հայաստանյայց Առաքելական Սուրբ Եկեղեցու՝ նա իր պարտքը համարեց հայ ժողովրդի համար օրհասական և պատերազմային տարիներին՝ 90-ականներից սկսյալ, Հանրային ռադիոյի եթերից «Գանձասար» և «Հավատամք» հոգեւոր ծրագրերի միջոցով Աստծո մխիթարող խոսքը, մեր Եկեղեցու սրբալույս հայրերի հոգեշահ քարոզներն ու խրատները հնչեցնել՝ լուսավորելով խավարում խարխափող, սովի ու թշնամու դեմ պայքարող հայորդիների հոգիները: Այդ հաղորդումները «Փրկության փարոսներ» էին նրանց համար, ովքեր այդ խավարային տարիներին գտան իրենց կյանք պարզեւած Արարիչ Աստծուն: Տիրոջ նախախնամությամբ հետագայում էլ Հայկ Կարապետյանին վստահվեց հեռուստատեսությամբ և ռադիոյով հոգեւոր հաղորդումներ վարելու առաքելությունը, որը նա սրբորեն կատարեց: Վերջին ծրագիրը Հանրային ռադիոյով հեռարձակվող ԱՅԹ-ի «Շողակն Արարատյան» հաղորդաշարն էր, որի պատասխանատուն և գլխավոր խմբագիրն էր՝ սկսած 2003 թվականից: Նա երկար տարիներ վարեց նաև «Քրիստոնյա Հայաստան» երկշաբաթաթերթի «Կից սենյակում» հարցաշարը:

Հայկի անժամանակ մահը անդառնալիցավ է նրան ճանաչելու երջանկությունն ունեցած յուրաքանչյուր մարդու համար: Կյանքից հեռացավ, հիրավի, արժանավոր և պատվախնդիր մի հայ, ում համար քրիստոնեությունը կենսակերպ էր: Մեծ բարեբախտություն էր Հայկին ճանաչելն ու նրա հետ աշխատելը: Միշտ համեստ ու խոնարհ՝ պատրաստ անշահախնդրորեն օգնության ձեռք մեկնելու նույնիսկ անծանոթին:

Ցավոք, ընդհատվեց նրա երկրավոր կյանքի ուղին, բայց սկսվեց ճամփորդությունը դեպի հավիտենություն, առ Աստված, քանզի մահվամբ բացվում են դռները հավիտենության: Մահը վերջն է այս ժամանակավոր կյանքի և սկիզբը՝ հավիտենության: Հ. Կարապետյանի անմահ հոգին գտավ իր հանգիստը երկնային խաղաղության մեջ, իր պաշտելի Աստծու մոտ, Ում սիրում էր իր ողջ Եղբայրները: Նրա անմահ հիշատակը վառ կմնա հարազատների, մտերիմների, ընկերների և նույնիսկ նրանց սրտերում, ովքեր գեթ մեկ անգամ նրան տեսնելու և նրա հետ շփվելու բարեբախտությունն են ունեցել:

Թող Տերն Իր երկնային լույսերի մեջ հանգչեցնի Հայկ Կարապետյանի ազնիվ հոգին՝ հարազատներին պարգեւելով Սուրբ Հոգու մխիթարությունը:

Հիշատակն արդարոց օրինությամբ եղից...

Բ. Ի. ՂԱՏԱԿՈՎ

Սկիզբը՝ թիվ 4-6, 8-10, 12, 14-15

Սրանով Հիսուսն ավարտեց մաքսավորներին ու մեղավորներին ուղղված Իր հորդորները՝ անարդարորեն ձեռք բերած հարստությունն ըստ պատկանելության վերադարձնելու մասին: Բայց Նա չէր կարող սրանով կանգ առնել, քանի որ այս խրատի կատարումը բաղկացած չէր զրեքումից հետո եկող առաջին քայլից միայն, որը փրկություն է տալու: Նա չէր կարող Իրեն լսողների մոտ ինչ-որ բան անհասկանալի թողնել: Իսկ ի՞նչ անել հետագայում՝ այդ առաջին քայլը կատարելուց հետո: Նա անկասկած պետք է լուսաբաներ նրանց այն ողջ ճանապարհը, որ տալու էր դեպի հավիտենական օթեւան, և իսկապես էլ լուսաբանում է, ապացույցը Նրա՝ Աստծուն և մամոնային միաժամանակ ծառայելու անհամատեղության մասին եզրափակող խոսքն էր:

Եվ այսպես՝ Տերը մաքսավորներին ու մեղավորներին պատվիրեց շուտափույթ ազատվել անիրավ ու սին մամոնայից, դառնալ իրենց ճշշող անիրավ հարստության մասին պատգամի հավատարիմ կատարողները: Տերը չէր կարող Իրեն լսողների ուշադրությունը չհրավիրել այն հարստության վրա, որքան էլ դա փոքր լինի, որը նրանք ձեռք են բերել և բերում են արդար ճանապարհով, որը և կմնա նրանց՝ անիրավին իրենց տերերին վերադարձնելուց հետո: Եթե անիրավ մամոնան, այսինքն՝ անազնիվ ճանապարհով ձեռք բերված հարստությունը մենք արդարորեն կարող ենք կոչել դիվային հարստություն, քանզի վաստակել են չարի միջոցով և հանուն չարի, ապա ազնիվ աշխատանքով ստեղծվածը հարկ է կոչել Աստծո ունեցվածք:

Թեպետ գոյություն ունեցող ամեն բան պատկանում է լոկ Աստծուն, ուստի մեզ պատկանող ունեցվածքը մեզ համար պետք է համարել օտարինը, բայց այդ «օտար» բառն առավելապես վերաբերում է այն ունեցվածքին, որն արդարորեն է ձեռք բերված, քանզի մենք այն ձեռք ենք բերել Աստծո ողորմածությամբ, այն Աստված տվել է մեզ ժամանակավոր գործածության համար, իսկ մենք պետք է այդ «օտարի» ունեցվածքը կառավարենք՝ համաձայն դրա տիրոջ կամքի, այսինքն՝ Աստծո:

Աստծո կամքն է, որ մենք սովյալներին կերակրենք, ծարավներին ջուր տանք, ճամփորդներին՝ ապաստան, մերկերին հագցնենք, հիվանդներին և բանտերում գտնվողներին այցելենք (Մատթ. ԻԵ 34-36), մի խոսքով՝ օգնենք մեր կարիքավոր մերձավորներին, որոնց Քրիստոսն անվանեց «Իմ փոքր եղբայրներ»: Պետք է այդ «օտարի» ունեցվածքը կառավարենք այնպես, որպեսզի որպես պարգև ստանանք մերը, այն, ինչը միայն պատկանում է մարդուն, այսինքն՝ հավիտենական կյանքի երանությունը: Երկրի վրա մենք ժամանակավոր անցորդներ ենք՝ ապրելով երկրային մեր կյանքը. մենք անցնում ենք մի ճանապարհ միայն, որը տալու է հավիտենություն, ուստի երկրային ամեն բան մերը չէ, այլ՝ *օտարինը*. մերն այնտեղ է, ուր գնալու ենք: Այդ *մեր* և *օտարինը* հասկացությունները հայտնի էին Հիսուսի բոլոր աշակերտներին, այսինքն՝ նրանց, ովքեր շրջում էին Նրա հետ և յուրացնում Նրա խոսքերը, քանզի այդ խոսքերն էին հենց Քրիստոսի ուսմունքի հիմքը: Դրանք, անշուշտ, գիտեին նաև Հիսուսին շրջապատող մաքսավորներն ու մեղավորները: Ուստի, հորդորեց Աստծո, այն է՝ *օտարի* ունեցվածքն ըստ Աստված-Տիրոջ կամքի կառավարել և դրա դիմաց խոտանացավ այն, ինչը մարդկանց միակ սեփականությունն է՝ միաժամանակ զգուշացնելով. «*Եթե օտարինը եղող բա-*

ՎՆԻՐՎԿ ՏՆՏԵՍԻ ՎՌՎԿԸ

Նի մեջ հավատարիմ չեղաք, ձեզ ո՞վ կվստահի ճշմարիտը»:

Եղե՛ք հավատարիմ օտարինը եղողի մեջ: Հիշե՛ք, որ դուք միայն կառավարիչներ եք՝ Աստծո ծառաներ, և պետք է միայն ու միայն ծառայեք Աստծուն: Հիշե՛ք, «որ ոչ մի ծառա երկու տիրոջ ծառայել չի կարող, որովհետև, եթե մեկին առնի, մյուսին կսիրի, կամ եթե մեկին մեծարի, մյուսին էլ կարհամարի: Հեք կարող ե՛ւ Աստծուն ծառայել, ե՛ւ մամոնային»: Հի՛ կարելի տրվել ընչաքաղցության մոլուցքին, չի՛ կարելի սիրել նյութական հարստությունը՝ նրան նվիրելով ձեր հոգու ողջ զորությունը, չի՛ կարելի, կու՞մք դարձնելով, պաշտել այն և միաժամանակ ծառայել Աստծուն, «քանի որ ուր ձեր գանձերն են, այնտեղ էլ ձեր սրտերը կլինեն» (Մատթ. 2 21): Եվ այսպես՝ եթե ուզում եք փրկվել, ապա առաջին հերթին վերադարձրե՛ք ձեր կողմից անարդար կերպով ձեռք բերված ողջ ունեցվածքը ճշմարիտ տերերին և հաշտվե՛ք նրանց հետ, որոնց նեղացրել եք, ապա նայե՛ք ձեր ունեցվածքի այն մասին, որը ձեռք եք բերել արդարորեն՝ որպես Աստծո ունեց-



վածք, և որին դուք նշանակված եք որպես ժամանակավոր տնտես և պարտավոր եք հաշվետվություն ներկայացնել ձեր տնտեսվարության մասին: Ունեցվածքը մի՛ դարձրեք պաշտամունքի առարկա, այլ՝ այն տնտեսվարեք ըստ Աստծո կամքի, մի՛ գլացեք օգնել կարիքավորներին՝ ըստ ձեր հնարավորությունների, եղե՛ք ազնիվ տնտեսներ ձեզ վստահված օտար ունեցվածքի վրա՝ որքան էլ այն փոքր լինի, և այդ ժամ կստանաք ձեր ճշմարիտ հարստությունը՝ երկնային Հոր հավիտենական օթեաններում:

Այսպիսին է անիրավ տնտեսի մասին առակի իմաստը: Այս առակով Քրիստոսը ցույց տվեց այն ուղին, որն անիրավ ճանապարհով հարստություն դիզած ընչաքաղցներին տալու է փրկություն: Բարոգելով, որ փրկություն կարող են ունենալ բոլոր մեղավորները՝ բարոյական անկման ինչպիսի աստիճանում էլ որ լինեն, Տերը, իհարկե, չէր կարող անհույս թողնել այնպիսի մեղավորների, ինչպիսին բոլորից արհամարհված, բոլորից մերժված մաքսավորներն էին: Եվ ահա հուսարեցնում էր նրանց՝ Նա Իր առակներով սովորեցնում է, թե ինչից պետք է սկսեն և ինչպես պետք է շարունակեն իրենց երթը դեպի երկնային թագավորություն: Այլ իմաստ այս առակը չի կարող ունենալ, և եթե մենք փորձենք փնտրել մեկ այլ իմաստ, ապա անխուսափելիորեն կխճճվենք մեր ունայն որոնումներում: Փրկչին շրջապատող մաքսավորներն ու մեղավորները չխնդրեցին բացատրել առակը. նշանա-

կում է հասկացել էին: Պետք է ենթադրել, որ փրկություն տալու ճանապարհի մասին լսել էին նաև մնացյալ մաքսավորներն ու մեղավորները, որոնք անձամբ չէին ունկնդրել Տիրոջը: Այդ մասին մեզ համոզում է մաքսապետ Չակբեոսը, ով հյուրընկալեց իր տանը Հիսուս Քրիստոսին և ասաց Նրան. «*Տե՛ր, ահա իմ ինչքերի կեսը կտամ աղքատներին, և եթե որեւէ մեկին զրկել եմ, քառապատիկ կհատուցեմ*» (Ղուկ. ԺԹ 8): Չակբեոսը որոշեց ոչ միայն վերադարձնել անրավ կերպով ձեռք բերածը բուն տերերին, այլև ավելիով հատուցել նրանց, որոնց նեղացրել էր, իսկ ունեցվածքի կեսն էլ՝ բաժանել կարոտյալներին: Ահա այսպես պետք է վարվեն բոլոր ընչաքաղցները, որոնք անարդար ճանապարհով են վաստակել: Ցավոք, հաճախ ենք տեսնում, թե ինչպես անիրավ ճանապարհով հարստացածները չեն գումարներ են հատկացնում բարեգործությանը, երբ իրենք «առատապես ուրախություն են անում» (Ղուկ. ԺԶ 19): Եվ այս հարուստները մտածում են, որ նման գործերով կարող են փրկել իրենց հոգին: Բայց չե՞ որ նրանք իրենցը չեն տալիս, այլ ուրիշինը, ուս-

տի չեն կարող քավել իրենց մեղքերը: Նրանք չեն կարող փրկվել, եթե չհետևեն մեր Տիրոջ՝ Հիսուս Քրիստոսի ցուցած ճանապարհին: Եթե ուզում եք փրկվել, վերադարձրե՛ք, ընչաքաղցներ, անարդար ճանապարհով ձեռք բերած ունեցվածքը ճշմարիտ տերերին, հաշտվե՛ք նրանց հետ, որոնց նեղացրել և կեղեքել եք և ապա բարեգործություն արե՛ք ձե՛ր գրպանից, ձե՛ր արդար վաստակից: Մի թաքցրե՛ք, թե իբր չեք հիշում նրանց, իսկ եթե իսկապես չեք հիշում և այդ պատճառով չեք կարողանում հաշտվել նրանց հետ, ապա մի օգտվե՛ք այդ անիրավ հարստությունից, այլ տվե՛ք աղքատներին:

Այո՛, Տիրոջը շրջապատող մաքսավորներն ու մեղավորները հասկացել էին առակը և անկասկած ուրախացել էին: Չէին հասկացել լոկ արծաթասեր փարիսեցիներն ու օրենսգետները, որոնք մեղադրում էին Հիսուսին՝ մեղավորների հետ հարաբերվելու համար: Այդ արծաթասեր փարիսեցիներն ու օրենսգետները ժամանակի հրեաների՝ հարստության հանդեպ ունեցած մտայնության ճշմարիտ արտահայտիչներն էին: Այդ հարստությունն այն ոսկե կուռքն էր, որին նրանք երկրպագում և ծառայում էին: Արծաթասիրությամբ հրեաները դեռեւս հնուց են հայտնի, իսկ հետո Բաբելոնում գերի ընկնելուց և ապա գերությունից ազատվելուց հետո ավետյաց երկիր չվերադառնալով (վերադարձավ միայն 42 000 հոգի) և սփռվելով աշխարհով մեկ՝ ամենուր եղան միշտ օտար, հյուր և ի դեպ՝ անցանկալի: Գիտակցելով ողջ աշխարհի հետ իրենց խորթությունը՝ նրանք դարձան առավել արծաթասեր, քանի որ իրենց ողջ ուժը տեսան միայն փողի մեջ: Նրանք հիշում էին Մովսեսի խոսքերը. «*Ձեր Տեր Աստվածը ձեզ երկրի բոլոր ագերից ավելի բարձր կդասի... փող փող կտաս շատ ազգերի, բայց ինքը նրանցից փոխ չես առնի*» (Երկրորդ օրենք ԻԸ 1, 12): Նրանք իրենց ողջ ջանքերը ուղղել էին արծաթ ու ոսկի կուտակելուն և իրենց բնավորության այդ առանձնահատկությունը փոխանցել էին ժառանգներին, որոնք մինչ օրս էլ սրբորեն պահպանում են:

Շարունակությունը՝ էջ 8

ՎԱՏԾՈՒ ԽՈՍՔԸ ԿՎՐՈՂ Ե ՎԵՐՎՈՒՆԵԼ ՄԱՐԴՈՒ ԿՅՎՆՔԸ

Սկիզբը՝ էջ 6

Ղուկասի Ավետարանում Զրիստոսն ասում է, որ Աստծո արքայությունը դոսից չի գալու, այլ ներսում՝ սրտի մեջ է։ Ինչպե՞ս. եթե մենք Աստծո կամքը կատարենք, Նրա պատվիրանների մեջ այն կարտահայտվի, այսինքն՝ միմյանց սիրելու, հանդուրժելու, օգնելու եւ մխիթարելու մեջ։ Ուրեմն Տիրոջ կամքը կատարելով՝ փոքրիկ քայլեր ենք անում երկնքի արքայությունը մեր մեջ հաստատելու համար։ Զրիստոսն էլ ասում է, որ Իր եղբայրներն ու քույրերը նրանք են, ովքեր կատարում են Աստծո խոսքը՝ դրանով իսկ հաստատած լինելով երկնքի արքայությունն այս աշխարհում։

- Փաստորեն՝ երկնքի արքայությունը կարող ենք ունենալ մեր սրտում եւ հոգում արդեն իսկ այս կյանքում՝ Տիրոջ պատվիրանների գործադրմամբ։

- Այո՛, եւ այդ գործն անում է Եկեղեցին, որի առաքելությունը երկնքի արքայության հաստատումն է երկրի վրա՝ Աստծո կամքը կատարելով։ Այդ ճանապարհին մարդիկ մտերիմ մարդկանց են գտնում, պատահական կերպով այնպիսի մտերմություններ, բարեկամական շփումներ են ստեղծվում, որոնց հետ արյունակցական կապ չունեն։ Մի քարոզիչ ասում էր, որ բոլոր քրիստոնյաներն իրար նման են մեղավոր լինելու եւ այդ մեղավորու-



թյունից Զրիստոսի արյամբ մաքրված լինելու առումով։ Զրիստոսի արյունը բոլոր քրիստոնյաներին Զրիստոսի եղբայր, քույր եւ ամենամտերիմ ազգականներից էլ ավելի մտերիմ է դարձնում։

- Ինչպիսի՞ մեծագույն շնորհ է արել մեզ Աստված՝ Իր կամքը կատարողներին Իր ազգականներն ու բարեկամներն անվանելով։

- Այո՛, եւ դա մեծ շնորհ լինելուց բացի՝ պատասխանատվության կոչ է, քանի որ եթե հարազատներ ենք, ուրեմն պատասխանատվությունն էլ պետք է շատ լինի։ Այսօրվա հասարակության մեծագույն խնդիրն իդեալ-

ներ կամ մեծ կերպարներ չունենալն է, հեղինակությունների կորուստը։ Համատարած տեսնում ենք արժեքների կորուստ, հեղինակությունների անկում... Այն մարդիկ, ովքեր իրենց կյանքը կկառուցեն Ավետարանի, Զրիստոսի խոսքերի վրա, ամուր են լինելու։ Ժայռն ամուր հավատքն է, որը հաստատվող, ապացուցվող երեւոյթ է։ Սա այն հավատն է, որն առանց պայմանականության ընդունում է Տիրոջ կողմից ասված ամեն ինչ։ Եվ Տերն ասում է. «Իսկ ով Իմ խոսքերը լսում է եւ չի կատարում, նման է այն մարդուն, որ հողի վրա առանց հիմքի տուն է շինում. գետը զարկեց, եւ այն իսկույն փուլ եկավ, եւ այդ

տան կործանումը մեծ եղավ» (Ղուկ. 2 49)։ Անշուշտ, դժվարություններ կան. այսօրվա մարդն Աստծո խոսքը լսելու, կարդալու եւ դրանով ապրելու ծուլությունն ունի, որովհետեւ մեզ այսօր սովորեցնում են ամեն ինչին հասնել արագ, առանց ջանք թափելու։ Եթե չկատարենք Ավետարանական՝ Աստծո խոսքը լսելու եւ կատարելու պատգամը, վաղ թե ուշ ծուլության ենք մատնվելու, որը բոլոր մեղքերի եւ չարիքների հիմքն է։

- Տե՛ր հայր, երբ աստվածային լույսը ծագում է մարդու սրտում ու հոգում, վերջինս անմացորդ հավատում է Աստծուն, փորձում հնարավորինս կատարել Նրա պատվիրանները, սակայն կյանքում գալիս է մի պահ, երբ մարդը կանգ է առնում եւ նահանջում, հոգեւոր անկում է ապրում... Ինչո՞ւ է սա պայմանավորված։

- Մարդու հավատքի կյանքը ճանապարհորդության պես է։ Երբեմն կարող են լինել կանգառներ, հետընթաց քայլեր. երանի թե մեկ քայլ ետ լինի, եւ երկուսը՝ առաջ, եւ ոչ՝ հակառակը։ Աստծո խոսքը լսելու առաջին հնարավորությունը հենց Ս. Գիրք կարդալն է։ Մի առակ հիշեցի. ասում են, որ սատանան մի անգամ հավաքում է իր բոլոր դեմակներին, որպեսզի տեսնի, թե այդ տարի ում է հանձնելու «լավ գործի» համար մրցանակը։

Հյուրընկալեց

Ամմելա ԽԱՉԱՏՐՅԱՆ

ԽԱՌՆԱԿՉԻ ՆԱՄԱԿՆԵՐԸ

Սկիզբը՝ էջ 6

Երբ դու ջանասիրաբար աշխատում ես, միանգամայն իրավացիորեն, այլ ճակատներում, չպետք է անտեսես որկրամոլության մի փոքր հանդարտիկ սոցիոսկոպիկ հնարավորությունը։ Տղամարդ լինելով՝ նա դժվար թե ընդունի «Այն ամենն, ինչ ես ուզում եմ» քողարկումը։ Տղամարդիկ ավելի հեշտությամբ որկրամոլ են դառնում իրենց սնափառության շնորհիվ։ Պետք է այնպես անել, որ նրանք իրենց մասին մտածեն, թե շատ լավ են հասկանում կերակրից, եւ հպարտանան, որ գտել են քաղաքի այն միակ ռեստորանը, որում տապակած մսեղենն իսկապես «ճիշտ» է եփված։ Ինչ որ ստացվում է որպես սնափառություն, կարող է աստիճանաբար վերածվել սովորության։ Բայց ինչպես էլ որ դու վարվես այս պարագայում, մեծ բան կլինի, եթե դու նրան այն վիճակին հասցնես, որում որեւէ հաճույքի (կարելի է, թե ինչի՞ շամպայնի թե թեյի, կոլբերտյան կարագի թե ծխախոտի) մերժումը նրան «կառնանա»։



որովհետեւ այդ ժամանակ նրա գոյությունը, արդարությունն ու հնազանդությունը՝ բոլորն էլ քեզ կենթարկվեն։

Կերակրի միայն անչափավորությունը պակաս արժեքավոր է, քան նրբաճաշակությունը։ Այն գլխավորապես գործածվում է որպես ծանր հրետանու մի տեսակ՝ ժուժկալության դեմ հարձակումների համար։ Դրա առնչությամբ (ինչպես եւ այլ բաների) քո այդ մարդուն պահիր կեղծ հոգեւոր վիճակի մեջ։ Երբեք թույլ մի՛ տուր, որ նկատի խնդրի բժշկական կողմը։ Պահիր նրան այն վիճակում, որ շարունակ ցանկանա հասկանալ, թե ինչ հպարտություն կամ թերափվատություն է նրան հանձնել քո ձեռքը, երբ ընդամենը մի

պարզ հարցում այն մասին, թե նա ինչ է կերել կամ խմել վերջին քսանչորս ժամվա ընթացքում, ցույց կտար նրան, թե քո գեղեցիկ աղբյուրը որն է, եւ այդպիսով նրան հնարավորություն կտար շատ չնչին չափավորությամբ վնասելու քո հաղորդակցության բոլոր գծերը։ Եթե նա պետք է մտածի ժուժկալության բժշկական կողմի մասին, նրան այն մեծ ստով կերակրիր, որին մենք ստիպել ենք անգլիացիներին հավատալ, այսինքն՝ որ ֆիզիկական չափազանց շատ վարժություններն ու դրա հետեւանքով առաջացող հոգ-նածությունը խիստ օգտակար են այս առաքելության համար։ Արժեք հարցնել, թե ինչպե՞ս են նրանք կարողանում հավատալ սրան, երբ գիտեն նավաստիների ու զինվորների հանրահայտ վավաշտության մասին։ Բայց մենք այս պնդումը տարածելու համար որպես խաղերի արդարացում գործածել ենք ուսուցիչներին՝ մարդկանց, ովքեր իսկապես հետաքրքրված էին ժուժկալությամբ, ուստի խաղերն առաջարկում էին որպես ժուժկալության համար օգնություն։ Բայց նամակի վերջում այս ամբողջ նյութին մանրակրկիտ անդրադառնալով շատ ժամանակ կխլեր։

Ըն սիրառատ քերի՝
ԽԱՌՆԱԿԻՉ

Շարունակելի

Անգլերենից թարգմանությունը՝ Ս. Ս. Կ

ՎՆԻՐԱՎ ՏՆՏԵՍԻ ՎՌՎԿԸ

Սկիզբը՝ էջ 7

Հասկանալի է, որ Հիսուսի՝ անիրավ հարստությունը հետ վերադարձնելու մասին պատգամներն արժաթասեր օրենսդրությունների ու փարիսեցիների համար ծիծաղելի էին։ Փողերը, անգամ անազնվորեն կորզած, վերադարձնելը, երբ նրանում է քո ողջ գործությունը, հետեւաբար նաեւ ողջ երջանկությունը, նման սին արդարների համար, ինչպիսին օրենսդրությունն ու փարիսեցիներն էին, այո՛, ծիծաղելի էր։ Եվ նրանք սկսեցին ծիծաղել։ Տերը կարճ ու կոնկրետ պատասխանեց նրանց լափրջ ծիծաղին. «Դուք եք, որ մարդկանց առաջ ձեզ արդար եք ձեւացնում, սակայն Աստված ձեր սրտերը գիտի, որովհետեւ այն, որ մարդկանց առաջ բարձր է, Աստծո առաջ զազրելի է»։ (Ղուկ. 2 15)։ Դուք ընդհանրապես համարում եք, որ փողը երկրային գործության հարստություն է՝ մարդկանց բարձրացնող, բայց իմացեք նաեւ, որ հարստությունը, որն ըստ ձեզ՝ այդպես բարձր է, այդպես հզոր մարդկանց համար, Աստծո համար ոչինչ է, զգվելի մի բան, որը խանգարում է շատերին հասնելու հավիտենական կյանքի երանությանը։ Դուք ձեզ հանգստացնում եք նրանով, որ ճշգրտորեն հետեւում եք Մովսեսի կողմից սահմանված եւ ավանդաբար փոխանցված ծեսերին եւ դրա միջոցով մուտք եք գործելու Մեսսիայի արքայությունը, որն իբր պատրաստված է ձեզ համար։ Սակայն սխալվում եք։ Աստծո կամքի կատարումը՝ արտահայտված օրենքով ու մարգարեություններում, մինչ Զովհաննեսն է եղել. «Օրենքն ու մարգարեները մինչեւ Զովհաննեսն էին, այնուհետեւ ավետարանվում է Աստծո արքայությունը» (Ղուկ. 2 16),



եւ ոչ ոքի տրված չէ այն բռնի ուժով ձեռք բերել, այն Խրայելի ցեղի սեփականությունը չէ։

Թարգմանությունը՝
Ս. ՄԱՍՏՐՈՆՅԱՆԻ

ԶԵՆՈՒՆԻՅԱՆ ՀԱՅԱՍՏԱՆ

Կրոնական, մշակութային, լրատվական երկշաբաթաթերթ

Հիմնադիր՝

Մայր Աթոռ Սուրբ Էջմիածին

Հրատարակիչ՝

«Զրիստոնյա Հայաստան» թերթի խմբագրություն

Գլխավոր խմբագիր՝

Աստղիկ Ստամբոլյան

Գրանցման վկայական՝ 624

Խմբագրության հասցեն՝

Մայր Աթոռ Սբ Էջմիածին

Հեռախոս՝ 517197

Էլ. փոստ՝ gh@etchmiadzin.am

astghikstam@gmail.com

web կայք՝

kh-tert.livejournal.com

krishayas.wordpress.com

Ստոր. տպագր. 3.9.2014 թ.

Տպաքանակը՝ 2100

Գինը՝ 50 դրամ